



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ



«ԹԻՄ» ԳԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ



ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՋԼՄ-ՆԵՐԻ ՑԱՆՑԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԳՅՈՒՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ՋԼՄ-ՆԵՐՈՒՄ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
2008 թվականի ընտրություններում ՀՀ նախագահի թեկնածուները	5
Ընդհանուր տեղեկատվություն Հայաստանի հեռարձակվող ՁԼՄ-ներում 2008 թվականի նախագահական ընտրությունների լուսաբանման դիտարկման մասին	6
Հետազոտված ՁԼՄ-ների ցանկը եւ համառոտ բնութագիրը	14
Հայաստանի հեռարձակվող ՁԼՄ-ներում ՀՀ 2008 թվականի նախագահական ընտրությունների լուսաբանման դիտարկման հաշվետվություն (1 հոկտեմբերի - 30 նոյեմբերի, 6-20 դեկտեմբերի 2007 թ., 21 հունվարի - 17 փետրվարի 2008 թ.)	15
Գրաֆիկներ	20
ՀՀ 2008 թվականի նախագահական ընտրությունների նախաշեմին Հայաստանի հեռարձակվող ՁԼՄ-ների դիտարկման միջանկյալ հաշվետվություն (1-31 հոկտեմբերի 2007 թ.)	32
Աղյուսակներ	35
ՀՀ 2008 թվականի նախագահական ընտրությունների նախաշեմին Հայաստանի հեռարձակվող ՁԼՄ-ների դիտարկման միջանկյալ հաշվետվություն (1-30 նոյեմբերի 2007 թ.)	38
Աղյուսակներ	41
ՀՀ 2008 թվականի նախագահական ընտրությունների նախաշեմին Հայաստանի հեռարձակվող ՁԼՄ-ների դիտարկման միջանկյալ հաշվետվություն (6-20 դեկտեմբերի 2007 թ.)	44
Աղյուսակներ	47
Աղյուսակներ հոկտեմբեր - դեկտեմբեր 2007	50
Նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում Հայաստանի հեռարձակվող ՁԼՄ-ների դիտարկման միջանկյալ հաշվետվություն (21-30 հունվարի, 2008 թ.)	60
Աղյուսակներ	63
Նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում Հայաստանի հեռարձակվող ՁԼՄ-ների դիտարկման միջանկյալ հաշվետվություն (31 հունվարի - 9 փետրվարի, 2008 թ.)	66
Աղյուսակներ	69
Աղյուսակներ հունվար-փետրվար 2008	72

ՆԱԽԱԲԱՆ

Սույն հրատարակության մեջ ներկայացված են Հայաստանի հեռարձակվող ՁԼՍ-ներում 2008 թվականի նախագահական ընտրությունների դիտարկման արդյունքները: Դիտարկումն իրականացրել են Երեւանի մամուլի ակումբը եւ «ԹԻՍ» հետազոտությունների կենտրոնը՝ Բաց հասարակության ինստիտուտի (ԲՀԻ) ՁԼՍ-ների ցանցային ծրագրի եւ ԲՀԻ Օժանդակության հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ: Հետազոտությունն անց է կացվել երկու փուլով. առաջին փուլն ընդգրկել է 2007 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսները, այսինքն նախընտրական քարոզչությանը նախորդող ժամանակաշրջանը, իսկ երկրորդը՝ օրենսդրությամբ ՀՀ նախագահի թեկնածուների նախընտրական քարոզչության համար նախատեսված ժամանակաշրջանը (2008 թվականի հունվարի 21-ից փետրվարի 17-ը): Այս հրատարակության մեջ ներառված են դիտարկման ընդհանուր հաշվետվությունը, ինչպես նաեւ՝ միջանկյալ փուլերի հաշվետվություններն ու աղյուսակները:

Քվեարկության օրվանից համարյա հինգ ամիս շուտ ՁԼՍ-ների գործունեությանը հետեւելու որոշումը պայմանավորված էր ընտրարշավի պաշտոնական մեկնարկից շատ առաջ Հայաստանում նախընտրական պայքարը սկսվելու հանգամանքով: Նման պատկեր էր նաեւ 2007 թվականի խորհրդարանական ընտրությունների նախաշեմին: Եվ այն ժամանակ, եւ հիմա երկրում քաղաքական իրավիճակի եւ ՁԼՍ-ների գործունեության վերլուծությունը վկայում էր, որ հիմնական մրցակիցների շրջանակը, մի շարք քաղաքական ուժերի ռազմավարությունը եւ լրատվամիջոցների հետ նրանց փոխհարաբերությունների բնույթը որոշվում էին օրենքով կարգավորվող «նախընտրական քարոզչության» մեկնարկից նշանակալիորեն ավելի շուտ: Հետեւաբար, առաջիկա նախագահական ընտրությունների նկատմամբ առաջատար հեռարձակվող ՁԼՍ-ների ուշադրության աստիճանը երկարատեւ ժամանակահատվածի ընթացքում հետազոտելը միայն կարող էր տալ ՁԼՍ-ների իրավիճակի եւ քաղաքական գործընթացներում նրանց դերի, թեկնածուների, առավել ազդեցիկ քաղաքական գործիչների նկատմամբ նրանց վերաբերմունքի իրական պատկերը:

2007 թվականի հոկտեմբեր-նոյեմբերին դիտարկման օբյեկտ էին այն քաղաքական գործիչները, ովքեր այս կամ այն կերպ հայտարարել էին 2008 թվականի նախագահական ընտրություններում իրենց թեկնածությունն առաջադրելու պլանների մասին, կամ այն գործիչները, ովքեր դիտարկվում էին իբրեւ հավանական թեկնածուներ, ինչպես նաեւ՝ 2007 թվականի խորհրդարանական ընտրություններում ձայների ավելի քան 1%-ը հավաքած կուսակցությունների առաջնորդները, բացառությամբ նրանց, ովքեր օրենքով չէին կարող առաջադրվել իբրեւ նախագահի թեկնածու:

2007 թվականի դեկտեմբերին դիտարկումը սկսվեց դեկտեմբերի 6-ից (այսինքն՝ այն օրվանից, երբ ավարտվեց նախագահի թեկնածուների պաշտոնական առաջադրման վերջնաժամկետը) եւ շարունակվեց մինչեւ դեկտեմբերի 20-ը: 2007 թվականի խորհրդարանական ընտրություններում ձայների ավելի քան 1 տոկոսը ստացած կուսակցությունների առաջնորդներից բացի, դեկտեմբերին հետազոտվող քաղաքական գործիչների ցուցակը լրացվեց առաջադրված ինը թեկնածուներով: Դրանում ընդգրկվեց նաեւ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որպեսզի պարզվի առաջադրված թեկնածուների համեմատ գործող նախագահի նկատմամբ հեռարձակվող ՁԼՍ-ների ուշադրության աստիճանը: Միաժամանակ, ցուցակից հանվեցին այն հավանական թեկնածուները, ովքեր որոշեցին չքվեարկվել:

Առաջատար հեռարձակվող ՁԼՍ-ների դիտարկումը վերսկսվեց 2008 թվականի հունվարի 21-ից: 2007 թվականի դեկտեմբերի 21-ից մինչեւ 2008 թվականի հունվարի 20-ն ընդմիջումը պայմանավորված էր Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոներով, երբ ՁԼՍ-ների մեծամասնության եթերային քաղաքականությունը կողմնորոշված է դեպի զվարճալի ծրագրերը, եւ դիտարկումը, համապատասխանաբար, քաղաքական պայքարի լուսաբանման տիպական պատկեր չի տալիս: Իսկ հետազոտությունը վերսկսելու օրը կապվեց նախընտրական քարոզչության սկզբին, քանի որ քարոզչության ժամանակաշրջանի համար ՀՀ օրենսդրությունը բոլոր թեկնածուների ընտրարշավների լուսաբանման հավասար հնարավորությունների հատուկ պահանջներ է ներկայացնում հեռարձակողներին: Նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում (2008 թ. հունվարի 21-ից մինչեւ փետրվարի 17-ը) դիտարկման օբյեկտ հանդիսացող քաղաքական գործիչների ցուցակը սահմանափակվեց ԿԸՀ կողմից գրանցված ՀՀ նախագահի ինը թեկնածուներով:

Երկու փուլերում էլ հետազոտության առարկա էին 8 հեռարձակվող ՁԼՍ-ներ. Հայաստանի հանրային հեռուստաընկերության առաջին ալիք (Հ1), «ԱԼՍ», «Արմենիա», Հայկական երկրորդ հեռուստաալիք (Հ2), «Երկիր մեդիա», «Կենտրոն», «Շանթ», Հայաստանի հանրային ռադիո:

Հետազոտվող ՁԼՄ-ների ցանկը սահմանափակվեց վերը թվարկվածներով եւ Հայաստանի մյուս հեռարձակվող, ինչպես նաեւ տպագիր ՁԼՄ-ները դրանում չներառնվեցին մի քանի պատճառներով: Նախ՝ ռեսուրսների սահմանափակության եւ այն ՁԼՄ-ներն ընտրելու նպատակահարմարությամբ, որոնք առավել շատ են ուշադրություն դարձնում երկրի քաղաքական գործընթացներին եւ ընդամին ունեն առավել լայն լսարան: Երկրորդ՝ հետազոտության բարձր որակ ապահովելու անհրաժեշտությամբ, ինչը ենթադրում է ունենալ բավարար թվով պատրաստված դիտարկողներ: Երրորդ, որ ամենագլխավորն է՝ հաշվի առնելով այն ակնհայտ իրողությունը, որ հեռարձակվող ՁԼՄ-ները, օգտագործելով հանրային ռեսուրս՝ հաճախականություն, հասարակության առջեւ անաչառ լուսաբանման որոշակի պարտավորվածություն ունեն: Այս մոտեցումն ընկած է միջազգային փաստաթղթերի եւ ՀՀ ազգային օրենսդրության հիմքում:

Անհրաժեշտ է ընդգծել նաեւ, որ եւ առաջին, եւ երկրորդ փուլում կիրառվել է միանման մեթոդոլոգիա, ընդ որում՝ դրանում արտացոլվում էին յուրաքանչյուր փուլի առանձնահատկությունները՝ պայմանավորված ՁԼՄ-ների գործունեության տարբեր օրենսդրական-նորմատիվ կարգավորմամբ (*մեթոդոլոգիան մանրամասնորեն ներկայացված է «Ընդհանուր տեղեկություններ Հայաստանի հեռարձակվող ՁԼՄ-ներում 2008 թվականի նախագահական ընտրությունների լուսաբանման դիտարկման մասին» բաժնում*): Հետազոտության ընթացքում կիրառվում էին քանակական եւ որակական դիտարկման մեթոդները: Որակական դիտարկումը ներառում էր Հայաստանում ընտրական գործընթացին վերաբերող օրենսդրության եւ այլ պաշտոնական փաստաթղթերի ուսումնասիրությունը, ՁԼՄ-ների ղեկավարների, լրագրողների, քաղաքական գործիչների եւ հասարակայնության ներկայացուցիչների հետ զրույցները, ինչպես նաեւ՝ ՁԼՄ-ների գործունեության մասին նրանց հրապարակային հայտարարությունների, արտահայտությունների վերլուծությունը: Քանակական դիտարկումը ներառում էր անմիջականորեն ՁԼՄ-ների հաղորդումների հաշվարկն ու չափումները:

2008 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

2008 թվականի փետրվարի 19-ին ՀՀ նախագահի ընտրություններին մասնակցում էր 9 թեկնածու:

2008 թվականի փետրվարի 24-ին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը հայտարարեց ՀՀ նախագահի ընտրությունների վերջնական արդյունքները: Թեկնածուների օգտին տրված ձայները բաշխվել էին հետևյալ կերպ (*տոկոսներով*).

	ՀՀ նախագահի թեկնածուներ	%
1.	Սերժ Սարգսյան (Հայաստանի Հանրապետական կուսակցություն)	52.82
2.	Լեւոն Տեր-Պետրոսյան (Ինքնառաջադրում)	21.52
3.	Արթուր Բաղդասարյան (Օրինաց Երկիր կուսակցություն)	16.69
4.	Վահան Հովհաննեսյան (Հայ Յեղափոխական Ղազնակցություն կուսակցություն)	6.18
5.	Վազգեն Մանուկյան (Ազգային Ժողովրդավարական Միություն կուսակցություն)	1.29
6.	Տիգրան Կարապետյան (Ժողովրդական կուսակցություն)	0.60
7.	Արտաշես Գեղամյան (Ազգային Միաբանություն կուսակցություն)	0.46
8.	Արման Մելիքյան (Ինքնառաջադրում)	0.27
9.	Արամ Հարությունյան (Ազգային Համաձայնություն կուսակցություն)	0.18

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՈՂ
ՁԼՍ-ՆԵՐՈՒՄ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ
ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի ՁԼՍ-ներում 2008 թվականի նախագահական ընտրությունների դիտարկումը ԵՄԱ-ն եւ «ԹԻՄ»-ը անց են կացրել երկու փուլով. *առաջին փուլը* ընդգրկում էր 2007 թվականի հոկտեմբեր-դեկտեմբերը (նախընտրական քարոզչությանը նախորդող ժամանակաշրջանը), *երկրորդ փուլը*՝ 2008 թվականի հունվարի 21-ից մինչեւ փետրվարի 17-ը (նախընտրական քարոզչության ժամանակաշրջանը):

Դիտարկման խնդիրներն էին՝ ստացված տվյալների վերլուծության միջոցով պարզել՝

- ընտրությունների ժամանակաշրջանում եւ դրանց նախաշեմին ՁԼՍ-ների գործունեության օրենսդրական կարգավորման արդյունավետությունը,

- 2008 թվականի նախագահական ընտրությունների նկատմամբ Հայաստանի հեռարձակվող ՁԼՍ-ների ուշադրության աստիճանը,

- հեռարձակվող ՁԼՍ-ների կողմից ընտրազանգվածին քաղաքական գործիչների, թեկնածուների մասին տեղեկություններ տրամադրելու համարժեքությունը,

- քաղաքական գործիչների, թեկնածուների համար՝ իրենց հայացքներն ու կարծիքներն արտահայտելու նպատակով հեռուստառադիոէթերի մատչելիությունը:

Դիտարկումն ընդգրկում էր **8 հեռարձակվող ՁԼՍ-ներ**.

4 համերկրային հեռուստաընկերություններ՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության առաջին ալիք (Հ1), «ԱԼՍ», «Արմենիա», Հայկական երկրորդ հեռուստաալիք (Հ2),

3 մայրաքաղաքային հեռուստաընկերություններ՝ «Երկիր մեդիա», «Կենտրոն», «Շանթ»,

1 համերկրային ռադիոընկերություն՝ Հայաստանի հանրային ռադիո:

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ (2007 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ) դիտարկումն իրականացնում էր «ԹԻՄ» հետազոտությունների կենտրոնը՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի ֆինանսական եւ Երեւանի մամուլի ակումբի մեթոդական ու ռեսուրսային աջակցությամբ:

Դիտարկման խումբը

Ծրագրի տնօրեն - Ավետ Դեմուրյան
Վերլուծաբան - Բորիս Նավասարդյան
Համակարգող - Էլինա Պողոսբեկյան
Դիտարկողներ - Արմինե Սուքիասյան, Սեդա Շիգանյան, Գոհար Հովսեփյան, Աստղիկ Հովհաննիսյան, Միլենա Այդինյան, Իրինա Հակոբյան, Էլեն Մելիքսեթյան, Ալվարո Նազարյան:

Դիտարկման ժամանակաշրջանը. 2007 թվականի հոկտեմբերի 1-ից նոյեմբերի 30-ը եւ դեկտեմբերի 6-ից 20-ը:

Դիտարկման առարկան. վերը հիշատակված ՁԼՍ-ների երեկոյան «փրայմ-թայմի» (18.00-24.00) այն բոլոր հաղորդումները, որոնցում կար քաղաքական գործիչների հիշատակում:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ (2008 թ. ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ) դիտարկումն իրականացնում էր Երեւանի մամուլի ակումբը՝ «ԹԻՄ» հետազոտությունների կենտրոնի մասնակցությամբ եւ Բաց հասարակության ինստիտուտի ՁԼՍ-ների ցանցային ծրագրի ֆինանսական աջակցությամբ:

Դիտարկման խումբը

Ծրագրի տնօրեն եւ վերլուծաբան - Բորիս Նավասարդյան

Համակարգող - Էլինա Պողոսբեկյան

Դիտարկողներ - Արմինե Սուքիասյան, Սեդա Շիգանյան, Գոհար Հովսեփյան, Միլենա Այդինյան, Իրինա Հակոբյան, Էլեն Սելիքսեթյան, Ալվարո Նազարյան, Հասմիկ Սեդրակյան:

Դիտարկման ժամանակաշրջանը. 2008 թվականի հունվարի 21-ից փետրվարի 17-ը:

Դիտարկման առարկան. վերը հիշատակված ՁԼՄ-ների երեկոյան «փրայմ-թայմի» (17.00-24.00) այն բոլոր հաղորդումները, որոնցում կար ՀՀ նախագահի թեկնածուների հիշատակում, ինչպես նաև նախընտրական քարոզչության (քաղաքական գովազդի) համար նախագահի թեկնածուներին հատկացված եթերաժամանակը (17.00-24.00, Հայաստանի հանրային ռադիոյի համար՝ 13.30-24.00): Դիտարկման ժամերի փոփոխությունը թելադրված էր հեռուստաալիքներում թեկնածուների նախընտրական քարոզչական նյութերի ցուցադրման ժամանակով: Մասնավորապես, ՀՀ-ում ՀՀ ԿԸՀ 2008 թվականի հունվարի 21-ի որոշմամբ թեկնածուների նախընտրական քարոզչությունն իրականացվում էր ժամը 17.15-ից: Հայաստանի հանրային ռադիոյի դեպքում թեկնածուներին հատկացված քարոզչության եթերաժամանակը հետազոտվում էր ժամը 13.30-ից, քանի որ ԿԸՀ-ի արդեն հիշատակված որոշմամբ հենց այդ ժամից էր Հանրային ռադիոյով հեռարձակվում թեկնածուների նախընտրական քարոզչությունը: Ինչ վերաբերում է Հանրային ռադիոյի խմբագրական լուսաբանմանը, ապա այն հետազոտվում էր ինչպես մյուս ալիքներում՝ ժամը 17.00-ից մինչև 24.00:

Ստորել ներկայացված է դիտարկման մեթոդոլոգիան՝ ըստ երկու փուլերի:

ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՈՂ ՁԼՄ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀՐԱՅԱՆԳ (1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ-30 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 6-20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 2007 Թ.)

I. ԴԻՏԱՐԿՄԱՆ ՍԵԹՈՂՈՒՈՒԹՅԱՆ

1. Հետազոտության հիմնական միավորը **հեռուստառադիոնյութն** է:

Հեռուստառադիոնյութ ասելով հասկանում ենք.

Եթերի՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձևավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝
ա. լրատվական ծրագրի առանձին սյուժեն,
բ. հաղորդավարական տեքստով ընթերցվող առանձին տեղեկատվությունը,
գ. հաղորդման՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձևավորմամբ (միջարկում, բլյուն եւ այլն) եւ տարբեր թեմաների/խնդիրների անդրադարձող առանձնացված մասը (բաժինը, սյուժեն),
դ. սյուժեների ծանուցումները (անոնսները) դիտարկվում են իբրև այն նյութի մաս, որին վերաբերում են,
ե. հեռուստառադիոսյուժեին (ռեպորտաժին եւ այլն) նախորդող հաղորդավարական տեքստերը դիտարկվում են իբրև այդ սյուժեի (ռեպորտաժի եւ այլն) մաս:

2. Դիտարկողներն ամեն օր արձանագրում են հետազոտվող եթերի տեւողությունը (**ժամը 18.00-ից 24.00**): Մինչեւ ժամը 18.00-ն սկսված, սակայն այդ ժամին չավարտված հաղորդումները չեն դիտարկվում. դիտարկումը սկսվում է նման հաղորդումն ավարտվելուց հետո: Մինչեւ 24.00-ն սկսված, սակայն այդ ժամին չավարտված հաղորդումները դիտարկվում են ամբողջ ծավալով՝ մինչեւ դրանց ավարտը:

Հետազոտվող եթերի բոլոր նյութերը բաժանվում են երկու տեսակի.

1. Խմբագրական լուսաբանում

2. Վճարովի հաղորդումներ եւ գովազդ/հայտարարություններ (քաղաքական, առևտրային, սոցիալական):

Այսպիսով, նյութի բնույթից ելնելով՝ դրա վերաբերյալ անհրաժեշտ տվյալները գրառվում են համապատասխան սյունակում՝ «Խմբագրական լուսաբանում» կամ «Վճարովի հաղորդումներ եւ գովազդ/հայտարարություններ»:

Ինչպես խմբագրական, այնպես էլ վճարովի/գովազդային նյութերի հետազոտման մեթոդոլոգիան

նույնն է եւ իր մեջ ներառում է.

1. Քաղաքական գործիչների հիշատակումների քանակի եւ նշանային բնութագրումների հաշվառումը

Ա. Դիտարկողները արձանագրում եւ հաշվառում են քաղաքական գործիչների *հիշատակումները*՝ հետազոտվող ՁԼՄ-ների խմբագրական եւ վճարովի լուսաբանումներում (*ժամը 18.00-ից 24.00*):

Բ. Բացի հիշատակումների ընդհանուր թվի արձանագրումից, հաշվառվում են նաեւ քաղաքական գործիչների *դրական (+), բացասական (-) եւ չեզոք (0)* հիշատակումները: Նշանային բնութագրիչ (դրական, բացասական) են համարվում նյութում քաղաքական գործչի մասին լսարանի մոտ միանշանակ դրական կամ բացասական ընդհանուր տպավորություն ստեղծած հիշատակումները: Երբ չկա նման միանշանակ տպավորություն՝ հիշատակումն արձանագրվում է որպէս չեզոք: Դիտարկողի բոլոր կասկածները նույնպէս մեկնաբանվում են հոգուտ հիշատակումը չեզոք համարելու: Բացի այդ, եթե նյութում տեղեկացվում է այն մասին, թե ինչ-որ մի անձ/կազմակերպություն հրապարակավ հայտարարել է նախագահական ընտրություններում առաջադրվելու մտադրություն հայտնած կամ առաջադրված քաղաքական գործչին աջակցելու կամ չաջակցելու մասին, ապա տվյալ գործչի հիշատակումը արձանագրվում է, համապատասխանաբար, իբրեւ դրական կամ բացասական:

Յուրաքանչյուր մեկ հեռուստառադիոնյութում յուրաքանչյուր քաղաքական գործչի հաշվին արձանագրվում է միայն մեկ հիշատակում եւ միայն մեկ նշանային վերաբերմունք:

Հիշատակում է համարվում նաեւ հեռուստակադրում քաղաքական գործչի ցանկացած հայտնվելը, եթե այդ կադրը նրան վերաբերող կամ հիշատակող նյութի մաս չէ: Եթե կադրում հայտնվելը այնպիսի նյութի մաս է, որում տվյալ գործիչը հիշատակվում է, ապա իբրեւ լրացուցիչ հիշատակում այն չի արձանագրվում:

Այս կատեգորիայում հաշվարկը կատարվում է *միավորներով*:

2. Քաղաքական գործիչների մասին նյութերի ծավալի հաշվարկը

Ա. Դիտարկողները արձանագրում եւ չափում են *նյութերի ծավալը*, այսինքն՝ հետազոտվող հեռարձակվող ՁԼՄ-ների (*ժամը 18.00-ից 24.00-ի*) խմբագրական եւ վճարովի լուսաբանումների այն *եթերաժամանակը (վայրկյաններով)*, որը հատկացվում է քաղաքական գործիչներին՝ իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու, ինչպէս նաեւ՝ այլոց կողմից նրանց մասին դատողությունների եւ պատմությունների համար:

Քաղաքական գործչին իր հայացքները, կարծիքները արտահայտելու կամ նրա մասին այլոց կողմից դատողություններ անելու կամ պատմելու համար հատկացված հեռուստանյութերի եթերաժամանակի չափումն իրականացվում է հետեւյալ սկզբունքով.

1) եթե հեռուստառադիոնյութն ամբողջովին նվիրված է այս կամ այն քաղաքական գործչին, ապա դրա ողջ եթերաժամանակը դիտարկողները վերագրում են տվյալ գործչին:

2) եթե քաղաքական գործչին նվիրվում է նյութի մի մասը միայն, ապա դիտարկողները տվյալ գործչին են վերագրում եթերի միայն այն մասը, որը նվիրված է նրան:

3) եթե ամբողջովին քաղաքական գործչին (անվանենք նրան X) նվիրված նյութում բերվում են մի այլ (X-ից տարբեր) քաղաքական գործչի (անվանենք Y) ասույթներ կամ՝ այլ անձանց դատողություններ, պատմություններ Y-ի մասին (*առանց X-ի հետ համեմատության*), ապա նյութի այդ մասի եթերաժամանակը վերագրվում է ինչպէս X-ին, այնպէս էլ Y-ին:

4) եթե ամբողջովին X քաղաքական գործչին նվիրված նյութում ներկայացվում են նրա արտահայտությունները մի այլ՝ Y քաղաքական գործչի մասին, կամ՝ Y-ի արտահայտությունները X-ի մասին, կամ՝ այլ անձանց դատողությունները, պատմությունները Y-ի մասին՝ *X-ի համեմատությամբ*, ապա այդ նյութի եթերաժամանակի *50-ական* տոկոսը դիտարկողները վերագրում են ինչպէս X-ին, այնպէս էլ Y-ին:

Բ. Քաղաքական գործչին հատկացված ընդհանուր եթերաժամանակից բացի, հետազոտվում է, թե ինչ կարգավիճակով է տվյալ գործիչը հանդես գալիս: Այդպիսով, խմբավորվում եւ համապատասխան սյունակում ներառվում է այն եթերաժամանակը (*վայրկյաններով*), որը հատկացվում է քաղաքական

գործչին՝ լուսաբանելով նրա.

1. Պաշտոնական եւ մասնագիտական գործունեությունը,
2. Մասնագիտական կամ պաշտոնական պարտականությունները կատարելուն անմիջականորեն չառնչվող գործունեությունը:

3. Բանավիճային հաղորդումների մասնակիցների արձանագրումը.

Դիտարկողներն առանձին ցուցակով արձանագրում են հետազոտվող հեռուստառադիոալիքների բանավիճային ծրագրերի («հարցազրույց», «հյուր ստուդիայում», «թոք շոու» ժանրի) մասնակիցներին (ժամը 18.00-ից 24.00)՝ նշելով ալիքը, ծրագրի անվանումը, հրավիրված մասնակցի (մասնակիցների) անունը (անունները) եւ պաշտոնը (պաշտոնները):

II. ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

2007 թվականի հոկտեմբեր-նոյեմբերին դիտարկման օբյեկտ էին 19 քաղաքական գործիչներ. այն գործիչները, ովքեր այս կամ այն կերպ հայտարարել էին 2008 թվականի նախագահական ընտրություններում իրենց թեկնածությունն առաջադրելու պլանների մասին, կամ այն գործիչները, ովքեր դիտարկվում էին իբրեւ հավանական թեկնածուներ, ինչպես նաեւ 2007 թվականի խորհրդարանական ընտրություններում ձայների ավելի քան 1%-ը հավաքած կուսակցությունների առաջնորդները, բացառությամբ նրանց, ովքեր օրենքով չէին կարող առաջադրվել իբրեւ նախագահի թեկնածու:

2007 թվականի դեկտեմբերին դիտարկման օբյեկտ էին 17 քաղաքական գործիչներ. առաջադրված բոլոր ինը ՀՀ նախագահի թեկնածուները, 2007 թվականի խորհրդարանական ընտրություններում ձայների ավելի քան 1%-ը հավաքած կուսակցությունների առաջնորդները (բացառությամբ նրանց, ովքեր օրենքով չէին կարող առաջադրվել իբրեւ նախագահի թեկնածու), ինչպես նաեւ՝ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը (որպեսզի պարզվի առաջադրված թեկնածուների համեմատ գործող նախագահի նկատմամբ հեռարձակվող ՁԼՍ-ների ուշադրության աստիճանը):

Ստորել՝ դիտարկման օբյեկտ հանդիսացած քաղաքական գործիչների ցուցակները:

2007 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ-ՆՈՅԵՄԲԵՐԻՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ*

1.	Գուրգեն Արսենյան
2.	Սամվել Բաբայան
3.	Արթուր Բաղդասարյան
4.	Արտաշես Գեղամյան
5.	Վիկտոր Դալլաքյան
6.	Ստեփան Դեմիրճյան
7.	Գագիկ Ծառուկյան
8.	Արամ Կարապետյան
9.	Տիգրան Կարապետյան
10.	Պարույր Հայրիկյան
11.	Արամ Հարությունյան
12.	Վահան Հովհաննեսյան
13.	Րաֆֆի Հովհաննիսյան
14.	Վազգեն Մանուկյան
15.	Արմեն Ռուստամյան
16.	Արամ Ջավենի Սարգսյան
17.	Սերժ Սարգսյան
18.	Լեւոն Տեր-Պետրոսյան
19.	Վարդան Օսկանյան

**Քաղաքական գործիչները ցուցակում ներկայացված են այբբենական կարգով*

2007 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ *

1.	Գուրգեն Արսենյան
2.	Սամվել Բաբայան
3.	Արթուր Բաղդասարյան
4.	Արտաշես Գեղամյան
5.	Ստեփան Դեմիրճյան
6.	Գագիկ Ծառուկյան
7.	Արամ Կարապետյան
8.	Տիգրան Կարապետյան
9.	Արամ Հարությունյան
10.	Վահան Հովհաննեսյան
11.	Րաֆֆի Հովհաննիսյան
12.	Վազգեն Մանուկյան
13.	Արման Մելիքյան
14.	Արամ Ջավենի Սարգսյան
15.	Սերժ Սարգսյան
16.	Լեւոն Տեր-Պետրոսյան
17.	Ռոբերտ Քոչարյան

**Քաղաքական գործիչները ցուցակում ներկայացված են այբբենական կարգով*

III. ԴԻՏԱՐԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

ա. Դիտարկողները ամեն օր հաշվարկում եւ կողավորված աղյուսակներում արձանագրում են բոլոր անհրաժեշտ տվյալները՝ ըստ յուրաքանչյուր հեռուստառադիոալիքի:

բ. Ստացված տվյալները ամփոփվում են յուրաքանչյուր ամիս եւ **2007 թ. հոկտեմբերի 1-ից 31-ի, նոյեմբերի 1-ից 30-ի, դեկտեմբերի 6-ից 20-ի** ժամանակաշրջանի համար ներկայացվում համակարգողին՝ համապատասխանաբար **նոյեմբերի 3-ին, դեկտեմբերի 3-ին եւ դեկտեմբերի 23-ին:**

գ. Դիտարկման ողջ ժամանակաշրջանում ստացված տվյալներն ամփոփվում են:

ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ՁԼՄ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀՐԱՅԱՆԳ (21 ՀՈՒՆՎԱՐԻ - 17 ՓԵՏՐՎԱՐԻ, 2008 Թ.)

I. ԴԻՏԱՐԿՄԱՆ ՍԵԹՈՂՈՒՈՒԳԻԱՆ

1. Հետազոտության հիմնական միավորը **հեռուստառադիոնյութն է:**

Հեռուստառադիոնյութ ասելով հասկանում ենք.

Եթերի՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝

ա. լրատվական ծրագրի առանձին սյուժեն,

բ. հաղորդավարական տեքստով ընթերցվող առանձին տեղեկատվությունը,

գ. հաղորդման՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ (միջարկում, բլյուն եւ այլն) եւ տարբեր թեմաների/խնդիրների անդրադարձող առանձնացված մասը (բաժինը, սյուժեն),

դ. սյուժեների ծանուցումները (անոնսները) դիտարկվում են իբրեւ այն նյութի մաս, որին վերաբերում են,

ե. հեռուստառադիոսյուժեին (ռեպորտաժին եւ այլն) նախորդող հաղորդավարական տեքստերը դիտարկվում են իբրեւ այդ սյուժեի (ռեպորտաժի եւ այլն) մաս:

2. Դիտարկողներն ամեն օր արձանագրում են հետազոտվող եթերի տեւողությունը **(ժամը 17.00-ից 24.00):** Մինչեւ ժամը 17.00-ն սկսված, սակայն այդ ժամին չավարտված հաղորդումները չեն դիտարկվում. դիտարկումը սկսվում է նման հաղորդումն ավարտվելուց հետո: Սակայն եթե նման հաղորդման ժամանակ, ընդմիջումներին ցուցադրվում են քաղաքական գովազդային հոլովակներ,

ապա դրանք ենթակա են դիտարկման: Մինչեւ 24.00-ն սկսված, սակայն այդ ժամին չավարտված հաղորդումները դիտարկվում են ամբողջ ծավալով՝ մինչեւ դրանց ավարտը: Սակայն եթե նման հաղորդման ժամանակ, ընդմիջումներին ցուցադրվում են քաղաքական գովազդային հոլովակներ, ապա դիտարկվում են միայն նրանք, որոնք սկսվել են մինչեւ ժամը 24.00-ն:

Հետագոտվող եթերի բոլոր նյութերը բաժանվում են երկու տեսակի.

1. Խմբագրական լուսաբանում

2. Թեկնածուին հատկացված նախընտրական քարոզչություն (քաղաքական գովազդ):

Այսպիսով, նյութի բնույթից ելնելով՝ դրա վերաբերյալ անհրաժեշտ տվյալները գրառվում են համապատասխան սյունակում՝ «Խմբագրական լուսաբանում» կամ «Քաղաքական գովազդ»:

3. Նախագահի թեկնածուների հիշատակումների քանակի եւ նշանային բնութագրումների հաշվառումը

Ա. Դիտարկողները արձանագրում եւ հաշվառում են նախագահի թեկնածուների *հիշատակումները* հետագոտվող ՁԼՄ-ների խմբագրական լուսաբանումներում (ժամը **17.00-ից 24.00-ն**):

Բ. Բացի հիշատակումների ընդհանուր թվի արձանագրումից, հաշվառվում են նաեւ թեկնածուների *դրական (+), բացասական (-) եւ չեզոք (0)* հիշատակումները: Նշանային բնութագրիչ (դրական, բացասական) են համարվում նյութում թեկնածուի մասին լսարանի մոտ միանշանակ դրական կամ բացասական ընդհանուր տպավորություն ստեղծած հիշատակումները: Երբ չկա նման միանշանակ տպավորություն՝ հիշատակումն արձանագրվում է որպես չեզոք: Դիտարկողի բոլոր կասկածները նույնպես մեկնաբանվում են հոգուտ հիշատակումը չեզոք համարելու: Բացի այդ, եթե նյութում տեղեկացվում է այն մասին, թե ինչ-որ մի անձ/կազմակերպություն հրապարակավ հայտարարել է թեկնածուին աջակցելու կամ չաջակցելու մասին, ապա վերջինիս հիշատակումը արձանագրվում է, համապատասխանաբար, իբրեւ դրական կամ բացասական:

Եթե նյութում հանդես է գալիս թեկնածուի նախընտրական շտաբի ներկայացուցիչը/վստահված անձը, եւ այդ կարգավիճակը հատուկ նշվում է, ապա հիշատակումը/նշանային բնութագրումը նույնպես վերագրվում է այդ թեկնածուին:

Յուրաքանչյուր մեկ հեռուստառադիոնյութում յուրաքանչյուր թեկնածուի հաշվին արձանագրվում է միայն մեկ հիշատակում եւ միայն մեկ նշանային վերաբերմունք:

Հիշատակում է համարվում նաեւ հեռուստակադրում թեկնածուի ցանկացած հայտնվելը, եթե այդ կադրը նրան վերաբերող կամ հիշատակող նյութի մաս չէ: Եթե կադրում հայտնվելը այնպիսի նյութի մաս է, որում տվյալ թեկնածուն հիշատակվում է, ապա իբրեւ լրացուցիչ հիշատակում այն չի արձանագրվում:

Այս կատեգորիայում հաշվարկը կատարվում է *միավորներով*:

4. Նախագահի թեկնածուների մասին նյութերի ծավալի հաշվարկը

Ա. Դիտարկողները արձանագրում եւ չափում են նաեւ *նյութերի ծավալը*, այսինքն՝ հետագոտվող հեռարձակվող ՁԼՄ-ների խմբագրական լուսաբանումների (ժամը **17.00-ից 24.00-ն**) այն *եթերաժամանակը (վայրկյաններով)*, որը հատկացվում է թեկնածուներին՝ իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու, ինչպես նաեւ՝ այլոց կողմից նրանց մասին դատողությունների եւ պատմությունների համար:

Եթե նյութում հանդես է գալիս թեկնածուի նախընտրական շտաբի ներկայացուցիչը/վստահված անձը, եւ այդ կարգավիճակը հատուկ նշվում է, ապա եթերաժամանակը նույնպես վերագրվում է այդ թեկնածուին:

Թեկնածուին՝ իր հայացքները, կարծիքները արտահայտելու կամ նրա մասին այլոց կողմից դատողություններ անելու կամ պատմելու համար հատկացված եթերաժամանակի չափումն իրականացվում է հետեւյալ սկզբունքով.

1) եթե հեռուստառադիոնյութն ամբողջովին նվիրված է այս կամ այն թեկնածուին, ապա դրա ողջ եթերաժամանակը դիտարկողները վերագրում են տվյալ թեկնածուին:

2) եթե թեկնածուին նվիրվում է նյութի մի մասը միայն, ապա դիտարկողները տվյալ թեկնածուին են վերագրում եթերի միայն այն մասը, որը նվիրված է նրան:

3) եթե ամբողջովին թեկնածուին (անվանենք նրան X) նվիրված նյութում բերվում են մի այլ (X-ից տարբեր) թեկնածուին (անվանենք Y) վերաբերող ասույթներ կամ՝ այլ անձանց դատողություններ, պատմություններ Y-ի մասին (**առանց X-ի հետ համեմատության**), ապա նյութի այդ մասի եթերաժամանակը վերագրվում է ինչպես X-ին, այնպես էլ Y-ին:

4) եթե ամբողջովին X թեկնածուին նվիրված նյութում ներկայացվում են նրա արտահայտությունները մի այլ՝ Y թեկնածուի մասին, կամ՝ Y-ի արտահայտությունները X-ի մասին, կամ՝ այլ անձանց դատողությունները, պատմությունները Y-ի մասին՝ **X-ի համեմատությամբ**, ապա այդ նյութի եթերաժամանակի **50-ական** տոկոսը դիտարկողները վերագրում են ինչպես X-ին, այնպես էլ Y-ին:

Բ. Թեկնածուին հատկացված ընդհանուր եթերաժամանակը գրանցելուց բացի, հետազոտվում է, թե ինչ կարգավիճակով է տվյալ թեկնածուն հանդես գալիս: Այդպիսով, խմբավորվում եւ համապատասխան գլխում ներառնվում է այն եթերաժամանակը (**վայրկյաններով**), որը հատկացվում է թեկնածուին՝ լուսաբանելով նրա.

1. Պաշտոնական եւ մասնագիտական գործունեությունը,
2. Մասնագիտական կամ պաշտոնական պարտականությունները կատարելուն անմիջականորեն չառնչվող գործունեությունը:

5. Հեռարձակվող ՁԼՍ-ներում նախագահի թեկնածուին հատկացված նախընտրական քարոզչության (քաղաքական գովազդի) ծավալի հաշվարկը

Դիտարկողները արձանագրում եւ չափում են **նյութերի ծավալը**, այսինքն՝ հեռարձակվող ՁԼՍ-ների այն **եթերաժամանակը (վայրկյաններով)**, որը հատկացվում է նախագահի թեկնածուին նախընտրական քարոզչության համար (**ժամը 17.00-ից մինչեւ 24.00**, Հանրային ռադիոյի համար՝ **13.30-ից մինչեւ 24.00**) եւ որը հեռուստառադիոալիքներում նշվում է իբրեւ «նախընտրական քարոզչություն»: Ընդամենն առանձին չափվում է վճարովի եւ անվճար քաղաքական գովազդի ծավալը:

Մինչեւ ժամը 17.00-ն սկսված սակայն այդ ժամին չավարտված քաղաքական գովազդի բլոկը չի դիտարկվում: Մինչեւ ժամը 24.00-ն սկսված սակայն այդ ժամին չավարտված քաղաքական գովազդի բլոկը դիտարկվում է ամբողջությամբ՝ մինչեւ դրա ավարտը: Բացառություն են միայն Հ1-ը եւ Հանրային ռադիոն, որոնցում, համաձայն ՀՀ ԿԸՀ 2008 թվականի հունվարի 21-ի որոշման, տեխնիկական անհրաժեշտությունից ելնելով, քաղաքական գովազդի սկիզբը կարող է տեղաշարժվել մինչեւ 30 րոպե: **Հետեւաբար, նման դեպքերում Հ1-ում եւ Հանրային ռադիոյում քաղաքական գովազդի բլոկը ենթակա է դիտարկման համապատասխանաբար ժամը 16.45-ից եւ 13.00-ից:**

6. Բանավիճային հաղորդումների մասնակիցների արձանագրումը

Դիտարկողներն առանձին ցուցակով արձանագրում են հետազոտվող հեռուստառադիոալիքների (ժամը **17.00-ից 24.00-ն**) բանավիճային ծրագրերի («հարցազրույց», «հյուր ստուդիայում», «թոք շոու» ժանրի) մասնակիցներին՝ նշելով ալիքը, ծրագրի անվանումը, հրավիրված մասնակցի (մասնակիցների) անունը (անունները) եւ պաշտոնը (պաշտոնները): Եթե բանավիճային ծրագրի մասնակիցը ոչ թե թեկնածուն է, այլ նրա նախընտրական շտաբի ներկայացուցիչը/վստահված անձը, եւ հաղորդման մեջ այդ կարգավիճակը հատուկ նշվում է, ապա բանավիճային ծրագրերի մասնակիցների ցուցակում այդ հաղորդումը վերագրվում է տվյալ թեկնածուին:

II. ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Դիտարկման օբյեկտ էին այն 9 քաղաքական գործիչները, որոնք ԿԸՀ կողմից գրանցվել էին իբրեւ նախագահի թեկնածու:

1.	Արթուր Բաղդասարյան
2.	Արտաշես Գեղամյան
3.	Տիգրան Կարապետյան
4.	Արամ Հարությունյան
5.	Վահան Հովհաննեսյան
6.	Վազգեն Մանուկյան
7.	Արման Մելիքյան
8.	Սերժ Սարգսյան
9.	Լեւոն Տեր-Պետրոսյան

III. ԴԻՏԱՐԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

ա. Դիտարկողները ամեն օր հաշվարկում եւ կողավորված աղյուսակներում արձանագրում են բոլոր անհրաժեշտ տվյալները՝ ըստ յուրաքանչյուր հեռուստառադիոալիքի:

բ. Ստացված տվյալները ամփոփվում են եւ **2008 թ. հունվարի 21-ից 30-ի, հունվարի 31-ից փետրվարի 9-ի, փետրվարի 10-ից 17-ի** ժամանակաշրջանի համար ներկայացվում համակարգողին՝ համապատասխանաբար **փետրվարի 2-ին, փետրվարի 12-ին եւ փետրվարի 19-ին**:

գ. Դիտարկման ողջ ժամանակաշրջանում (**հունվարի 21-ից փետրվարի 17-ը**) ստացված տվյալներն ամփոփվում են:

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԶԼՄ-ՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ - հանրային հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2001 թվականին: Ղեկավար մարմինը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Հետազոտվել է Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքը (Հ1): Հ1-ի օրական հեռարձակման տեւողությունն է՝ շուրջօրյա՝ Երեւանում եւ 19,5 ժամ՝ Հայաստանի մնացած տարածքում:

«ԱԼՄ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2000 թվականին: Հիմնադիրը՝ «ԱԼՄ հոլդինգ» ՍՊԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 24 ժամ:

«ԱՐՄԵՆԻԱ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998 թվականին: Հիմնադիրները - «Գաֆեսյան» ընտանեկան ֆոնդ եւ «Սարգսյանների ընտանիք» ֆոնդ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 24 ժամ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՄՏԱՍԿԻՔ (Հ2) - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998 թվականին: Հիմնադիրները մասնավոր անձինք են: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 18,5 ժամ:

«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2004 թվականին: Հիմնադիրը՝ «Հուսաբեր» ՓԲԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 24 ժամ:

«ԿԵՆՏՐՈՆ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2002 թվականին: Հիմնադիրը՝ «ՇԱՐՄ» ՓԲԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 19 ժամ:

«ՇԱՆԹ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1994 թվականին: Հիմնադիրը՝ «Շանթ» ՍՊԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 19 ժամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՈԱԴԻՈ - հանրային ռադիոընկերություն: Հիմնադրվել է 2001 թվականին: Ղեկավար մարմինը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 24 ժամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ՁԼՄ-ՆԵՐՈՒՄ
ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼՈՒՍԱՔԱՆՈՒՄԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ - 30 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 6-20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2007 Թ.,
21 ՀՈՒՆՎԱՐԻ - 17 ՓԵՏՐՎԱՐԻ 2008 Թ.)

ԸՆԴՀԱՆՐԱՑՆԵԼՈՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ դիտարկման խումբը նշում է հետևյալը.

- 2007 թվականին ընտրական օրենսդրության մեջ կատարված փոփոխությունները նախկինի համեմատ առավել պարզություն են մտցրել ընտրությունների ընթացքում ՁԼՄ-ների գործունեության իրավական հիմունքներում,
- նախընտրական քարոզչության 28-օրյա ժամանակահատվածը եթերաժամանակի բաշխման առումով հիմնականում աչքի է ընկել նախագահի թեկնածուների ընտրարշավների համաչափ լուսաբանմամբ,
- թեկնածուներն իրենց քարոզչական նյութերը հետազոտվող ՁԼՄ-ների վճարովի եւ անվճար եթերում տեղաբաշխելու խոչընդոտներ չեն ունեցել,
- նախագահի թեկնածուների մեծամասնությունը բազմիցս բավարարվածություն է արտահայտել հեռարձակվող ՁԼՄ-ներում ընտրարշավի լուսաբանումից:

ՄԻԱԺԱՄԱՆԱԿ, սույն հետազոտությունը վեր հանեց մի շարք լուրջ խնդիրներ եւ թերություններ, որոնք որոշակի ազդեցություն են ունեցել նախընտրական իրավիճակի եւ ընտրությունների ընթացքի վրա: Առանձին դեպքերում այդ խնդիրների վերլուծությունը Երեւանի մամուլի ակումբին եւ «ԹԻՄ» հետազոտությունների կենտրոնին հիմք են տալիս անելու մի շարք առաջարկություններ:

1. Պահպանվում է ընտրություններին նախորդող ժամանակաշրջանում ՁԼՄ-ների գործունեության օրենսդրական կարգավորման խնդիրը: Այդ ժամանակաշրջանի ձեւակերպումը, որ նախկինում լուրջ տարընթերցումների տեղիք էր տալիս, 2007 թվականի նոյեմբերին հանվեց «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքից, եւ կարգավորվող մնաց միայն «նախընտրական քարոզչության» ժամանակաշրջանը, որը 2008 թվականի նախագահական ընտրություններում ընդամենը 28 օր էր (հունվարի 21-ից փետրվարի 17-ը): Մինչ այդ հեռարձակվող ալիքների՝ սպասվող ընտրություններին վերաբերող գործունեությունը որեւէ կերպ չէր կարգավորվում: Այնինչ նախընտրական պայքարը ինչպես այս, այնպես էլ 2007 թվականի խորհրդարանական ընտրություններում սկսվել էր պաշտոնական, օրենքով նախատեսված «նախընտրական քարոզչության» ժամանակաշրջանից շատ առաջ, սակայն որեւէ օրենսդրական կարգավորման բացակայությունը պատճառ էր դառնում հավանական թեկնածուների համար անհավասար պայմանների, ինչը չէր կարող համարժեք փոխհատուցվել քարոզչական արշավի 28 օրերի ընթացքում: 2007 թվականի հոկտեմբեր-դեկտեմբերին դիտարկման խումբը նախագահի հավանական թեկնածու համարվող քաղաքական գործիչների լուսաբանումների ծավալի եւ բնույթի էական տարբերություններ է արձանագրել: Այսպես, համախառն (հետազոտված բոլոր ութ ալիքներում) եթերաժամանակով առաջատարը լուսաբանման 35 անգամ ավելի ծավալ էր ունեցել, քան նախագահական ընտրություններում նրա ապագա մրցակիցը:

2. Օրենսդրության մեջ խնդրահարույց է մնում հեռարձակվող ՁԼՄ-ների գործունեությունը կարգավորող մարմնի համար՝ Հանրային հեռուստառադիոընկերության (ՀՀՌԸ) գործունեությունը կարգավորելու հստակ օրենսդրական մեխանիզմների բացակայությունը: ՀՀ Սահմանադրության մեջ 2005 թվականի կատարված փոփոխությունները սահմանեցին, որ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային հեռարձակողների համար միասնական կարգավորող մարմին է: Այդ դրույթը հետագայում տեղ գտավ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում, սակայն, ընդսմին, կոնկրետ մեխանիզմներ չամրագրվեցին: Իբրեւ հետեւանք՝ Հանրային հեռուստառադիոընկերությունը փաստացի մի կառույց է, որը հաշվետու չէ ոչ մեկին, եւ դա չէր կարող չազդել նրա կողմից ընտրարշավի լուսաբանման վրա:

3. Լուրջ հիմքեր կան պնդելու, որ Հանրային հեռուստառադիոընկերությունը խախտել է հեռարձակման մասին ՀՀ օրենսդրությունը: «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի

համաձայն, Հանրային հեռուստառադիոընկերության հաղորդումներում «քաղաքական դիրքորոշման գերակշռությունն արգելվում է»: Ընդ որում այս արգելքը տարածվում է Հանրային հեռուստառադիոընկերության ողջ գործունեության վրա, եւ ոչ թե միայն ընտրությունների ժամանակաշրջանի: Հանրային հեռարձակողի մի շարք հաղորդումներում, եւ ամենից առաջ Հ1-ի կիրակնօրյա լրատվական-վերլուծական «360 աստիճան» հաղորդման մեջ առկա էին քաղաքական կողմնակալության ակնհայտ նշաններ: Քանի որ նրանում, մասնավորապես, 2007 թվականի հոկտեմբեր-դեկտեմբերին հետեւողականորեն արտահայտվում էր հաղորդման հեղինակների բացասական վերաբերմունքը ՀՀ առաջին նախագահ եւ այս ընտրություններում նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ, դա կարելի է մեկնաբանել իբրեւ «քաղաքական դիրքորոշման գերակշռություն»:

4. ՀՀԲԸ ղեկավարությունը ընտրություններին նախորդած մի քանի ամիսների ընթացքում բազմիցս քամահրական վերաբերմունք է ցուցաբերել ընկերության գործունեության մասին հասարակական կարծիքի նկատմամբ: Նման վերաբերմունքի, մասնավորապես, արժանացավ Երեւանի պետական համալսարանի մի խումբ դասախոսների, հայ հայտնի գիտնականների՝ 2007 թվականի դեկտեմբերին տարածած հայտարարությունը, որը երկրի հեռուստաընկերություններին, այդ թվում Հայաստանի հանրային հեռուստատեսությանը կոչ էր անում «չմոռանալ հանրության առաջ ունեցած պարտավորությունների մասին եւ վերջ դնել հասարակության լայն շերտերին տեղեկատվական շրջափակման մեջ առնելու քաղաքականությանը»: Իսկ 2008 թվականի փետրվարին, ի պատասխան ընտրությունների ընթացքում Հանրային հեռուստատեսության գործունեությունից անբավարարվածության, որ արտահայտել էր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, հետեւեց ՀՀԲԸ խորհրդի նախագահի նույնիսկ ոչ թե քամահրական, այլ վիրավորական արձագանքը: Հասարակության ցանկացած քննադատությունը չընդունելը՝ ընդսմին, արտահայտված հանդուգն ոճով, դառնում է այս ընկերության ղեկավարի վարքագիծ, ինչը հակասում է դրա կարգավիճակին ու առաքելությանը:

5. Չնայած այն բանին, որ սույն դիտարկումը բավարար հիմք չի տալիս խոսելու մասնավոր հեռարձակվող ՁԼՄ-ների կողմից օրենսդրության ակնհայտ խախտումների մասին, նրանցում ընտրարշավի լուսաբանումը մի շարք ինդիկատորներով չէր համապատասխանում ընդունված միջազգային չափանիշներին ու «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի ոգուն: Վերջինս սահմանում է. «հեռուստառադիոընկերությանը հեռարձակվող լրատվական հաղորդումներում թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների (հանրաքվեի քարոզչությանը մասնակցող կողմերի) նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչության վերաբերյալ պետք է ներկայացվի անկողմնակալ եւ զնախատականներից զերծ տեղեկատվություն՝ ապահովելով արդար եւ հավասար պայմանների պահպանումը»: Այնինչ, առանձին թեկնածուների դրական եւ բացասական հիշատակումների հակադիր հարաբերակցությունը (*տես ստորեւ՝ կետ 9*) որոշակի չափով ձեւավորվել է հանրային եւ մասնավոր կայանների լրատվական թողարկումների հաշվին: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի R (99) 15 Հանձնարարականում նշված է. «(...) Հարգելով հեռարձակող լրատվամիջոցների ազատության սկզբունքը՝ կարգավորող մարմինները պետք է հետեւեն, որ հեռարձակվող բոլոր ծրագրերում պահպանվի անաչառությունը, հավասարակշռությունը եւ անկողմնակալությունը: Դա պետք է վերաբերի թե հանրային ծառայությանը եւ թե մասնավոր հեռարձակողներին»: Այնինչ, մասնավոր հեռուստաալիքների՝ դիտարկման առարկա հանդիսացած ոչ բոլոր հաղորդումներն էին հետեւում Հանձնարարականում շարադրված սկզբունքներին: Ամենացայտունը «Կենտրոն» հեռուստաալիքի «Ի՞նչ են գրում թերթերը» հաղորդման օրինակն է: Մամուլի այս տեսության մեջ հունվարի 21-ից փետրվարի 17-ը արձանագրվել է նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի 71 բացասական եւ ոչ մի դրական հիշատակում, այն դեպքում, երբ Հայաստանի հանրապետական կուսակցությունից նախագահի թեկնածու, վարչապետ Սերժ Սարգսյանը հիշատակվել է դրական կամ չեզոք համատեքստում: Ինչպես նշվել է հայրենական լրատվական շուկայի բազմաթիվ ուսումնասիրություններում, Հայաստանի տպագիր հրատարակությունների մեծամասնությունն ունի վառ արտահայտված եւ բազմազան (հաճախ՝ ծայրահեղ) քաղաքական ուղղվածություն: Մասնավորապես, ներկա ընտրարշավում թերթերի դիրքորոշումները, առաջին հերթին՝ վարչապետի եւ առաջին նախագահի անձերի վերաբերյալ, տրամագծորեն հակադիր են: Սարգսյանի եւ Տեր-Պետրոսյանի հիշատակումների՝ վերջ բերված ցուցանիշները վկայում են, որ անդրադառնալով մամուլում այս երկու քաղաքական գործիչների լուսաբանումներին, «Ի՞նչ են գրում թերթերը» հաղորդման հեղինակները ծայրահեղ միտումնավորություն են ցուցաբերում տեսության համար նյութեր ընտրելիս:

6. Ընդունված միջազգային չափանիշների խախտում էր նաեւ թեկնածուներից մեկի օգտին

քարոզչության տարրերի առկայությունն այնպիսի հաղորդումներում, որոնք չէին վերաբերում ոչ նախընտրական քարոզչական նյութերի, ոչ էլ տեղեկատվական կամ քաղաքական ծրագրերի թվին: Նման տարրեր են արձանագրվել 31-ով 2008 թվականի հունվարի 28-ին Հայկական բանակի 16-ամյակին նվիրված համերգի հեռարձակման մեջ, ինչպես նաև «Դժբախտ երջանություն» («Արմենիա») եւ «Վերվարածները» («Շանթ») սերիալներում. երկուսն էլ 2008 թ. փետրվարի 13-ին: 7. Այն դեպքում, երբ ընտրությունների ընթացքում օրենքների պահպանմանը վերահսկելու կոչված մարմինների (տվյալ դեպքում՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի եւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի) կողմից արձագանքների առիթները քիչ չէին, վերջիններս սահմանափակվում էին երբեմն-երբեմն համապատասխան ՁԼՄ-ներին հարցումներ ուղարկելով եւ բավարարվում էին ստացված բացատրություններով: Այնինչ, բացի վերը հիշատակված՝ հանրային եւ մասնավոր ալիքների աջառությանն առնչվող պրոբլեմներից, դիտարկման խումբը արձանագրել է մի շարք նյութեր, որոնք հեռարձակվել են իբրեւ խմբագրական, սակայն, ընդամեն, ունեցել են այս կամ այն քաղաքական գործիչների, այդ թվում նախագահի թեկնածուների գովազդի տարրեր: Այսպես, 2007 թվականի նոյեմբերի 4-ին «ԱԼՄ»-ի եթերում ցուցադրվեց «10 տարի. Օրինաց երկիր» ֆիլմը՝ նվիրված ՕԵԿ-ի եւ նրա առաջնորդ Արթուր Բաղդասարյանի գործունեությանը: Դրանից ոչ շատ առաջ՝ հոկտեմբերի 25-ին, հյուրընկալվելով «Դիրքորոշում» հաղորդաշարին, ՕԵԿ-ի առաջնորդ եւ նախագահի թեկնածու Արթուր Բաղդասարյանը հիշատակեց այդ ֆիլմը եւ խնդրեց հաղորդումը վարող Տիգրան Կարապետյանին՝ վճարի դիմաց ցուցադրել այն իրենց եթերում ու համաձայնություն ստացավ: Սակայն ֆիլմի ցուցադրման ժամանակ վճարովի եթերի մասին որեւէ նշում չկար: 2007 թվականի նոյեմբերին «Կենտրոնի», «ԱԼՄ»-ի եւ 32-ի եթերով բազմիցս ցուցադրվեց երեւանի կոնյակի-գինու-օղու «Արարատ» կոմբինատի 130-ամյակի տոնակատարության եւ երեւանում անցկացված ձյուդոյի միջազգային մրցաշարի մասին պատմող ֆիլմը, որը միտված էր կոմբինատի սեփականատեր եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանի դրական իմիջի ձեւավորմանը: Նույն երեք ալիքներով 2007 թվականի հոկտեմբեր-նոյեմբերին ցուցադրվեցին մի քանի միեւնույն ռեպորտաժներ, որոնցում կենտրոնական դեմքը նույն Գագիկ Ծառուկյանն էր: Այստեղ խնդիրը այդ նյութերի հաճախությունն էր եւ դրանց հայտնվելը միանգամից երեք ալիքներում: Տրամաբանական կլիներ սպասել առնվազն օրենսդրությանը դրանց համապատասխանության տեսակետից այդ ռեպորտաժների ուսումնասիրություն, ինչը, սակայն, չարվեց: Սա վկայում է Հայաստանում ՁԼՄ-ներին վերաբերող օրենսդրության պահպանմանը անբավարար հետեւողականությամբ վերաբերվելու մասին, ինչն ազդում է, մասնավորապես, ընտրարշավների լուսաբանման վրա:

8. Հայաստանում անբավարար է կարգավորված նաև ընտրություններում թեկնածու առաջադրված անձանց պաշտոնական գործունեության լուսաբանումը: Ի հետեւանք՝ իշխանությունը ներկայացնող թեկնածուները, որպես կանոն, առավելություն են ստանում: Մասնավորապես, Հայաստանի հանրապետական կուսակցությունից նախագահի թեկնածու, վարչապետ Սերժ Սարգսյանը 2007 թ. հոկտեմբեր-դեկտեմբերին մյուս թեկնածուների նկատմամբ մեծ առավելություն ուներ լուսաբանումների ծավալով եւ բնույթով: Միայն այն փաստը, որ հետազոտված ալիքներում նրան հատկացված համախառն եթերաժամանակի մոտ 80%-ը բաժին էր ընկնում նրա՝ իբրեւ կառավարության ղեկավարի գործունեության լուսաբանմանը, չի կարող դիտարկվել իբրեւ բավարար բացատրություն: Հիշյալ ժամանակաշրջանում Սերժ Սարգսյանն իբրեւ վարչապետ (նույնիսկ առանց հաշվի առնելու նրան՝ իբրեւ քաղաքական գործչի հատկացված եթերաժամանակը) մի քանի անգամ ավելի մեծ ուշադրության է արժանացել, քան երկրի ղեկավարությունը ներկայացնող առավել լուսաբանվող մյուս երկու գործիչները՝ նախագահ Ռոբերտ Քոչարյանը եւ արտգործնախարար Վարդան Օսկանյանը: Սա հիմք է տալիս խոսելու ընտրարշավում վարչական ռեսուրսի օգտագործման մասին: Եթերում Սերժ Սարգսյանի՝ իբրեւ պաշտոնատար անձի հաճախակի եւ երկարատեւ հայտնվելը, անշուշտ, նույնպես ազդեցություն է ունեցել ընտրողի վրա:

9. Հետազոտված հեռարձակվող ալիքների կողմից նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում թեկնածուների նկատմամբ հարաբերականորեն համաչափ ուշադրության պայմաններում, դիտարկման խումբը արձանագրել է հետագայում նախագահի աթոռի երկու գլխավոր հավակնորդներ դարձած թեկնածուների նշանային բնութագրիչ լուսաբանումների բեւեռացվածություն: Նրանց լուսաբանումների ամենամեծ տարամիտությունը նկատվել է նախընտրական քարոզչությանը նախորդած ժամանակաշրջանում՝ 2007 թվականի հոկտեմբեր-դեկտեմբերին, երբ Սերժ Սարգսյանը 297 անգամ հիշատակվել է դրական եւ 28 անգամ բացասական (մնացած դեպքերում՝ չեզոք) համատեքստում, իսկ Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 20 անգամ դրական եւ 507 անգամ բացասական (մնացած դեպքերում՝ չեզոք) համատեքստում: Այդ ժամանակաշրջանում դիտարկման խումբն արձանագրել է քաղաքական գործիչների նշանային բնութագրիչ հիշատակումների աննախադեպ բարձր չափաբաժին: Օրինակ, 2007 թվականի նոյեմբերին

Հայաստանի հանրային ռադիոյուն Լեւոն Տեր-Պետրոսյանի հիշատակումների 79%-ն ուներ բացասական բնույթ, իսկ դրական հիշատակումներ չկային: Նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում հետազոտված ՁԼՄ-ների եթերում նշանային բնութագրիչ հիշատակումների բաժինը եւ երկու հիմնական հավակնորդների լուսաբանումների բեւեռացվածությունը նվազեցին, թեպետ՝ միտումը պահպանվում էր: Սերժ Սարգսյանը 28 օրերի ընթացքում դրական է հիշատակվել 264 եւ բացասական 60 անգամ (նշանային բնութագրիչ հիշատակումները կազմել են բոլոր 8 ալիքներում այս թեկնածուի ընդհանուր հիշատակումների 23,4%-ը), իսկ Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 22 անգամ դրական եւ 406 անգամ բացասական (34,7%): Որոշ չափով Տեր-Պետրոսյանի բացասական հիշատակումների մեծ քանակությունը պայմանավորված է նրա հասցեին նախագահի այլ թեկնածուների քննադատությամբ (406-ից 156-ը): Սակայն անգամ բացասական հիշատակումների մնացած քանակությունը համոզիչ կերպով վկայում է այս թեկնածուի լուսաբանումների անհամաչափ բնույթի մասին: Բացի այս, հետազոտված ալիքները նպատակամետ ցիտում էին մյուս թեկնածուների հրապարակային ելույթների այն հատվածները, որոնցում քննադատություն կար Լեւոն Տեր-Պետրոսյանի հասցեին:

10. Ընտրություններում իբրեւ թեկնածու առաջադրված պաշտոնատար անձանց լայնորեն լուսաբանման, նշանային բնութագրիչների մեծ քանակության եւ միջազգային չափանիշներից այլ շեղումների պատճառներից մեկը ընտրությունների ընթացքում ՁԼՄ-ների վարքի մշակված եւ թափանցիկ կանոնների բացակայությունն է: Օրենսդրությունը հնարավոր չէ շարադրել այնքան մանրամասն, որ երաշխավորվի ընտրությունների ընթացքում ընտրազանգվածին տեղեկությունների արդյունավետ տրամադրում: Այդ պատճառով առաջանում է մասնագիտական ինքնակարգավորման, վարքականոնների ձեւավորման, ընտրությունների լուսաբանման խմբագրական քաղաքականության անհրաժեշտություն: Ցավոք, հետազոտված ալիքներից ոչ մեկը չուներ մասնագիտական վարքի ձեւակերպված կանոններ, եւ նման կանոնների մշակումը՝ Հայաստանում ՁԼՄ-ների ինքնակարգավորման ինստիտուտների ընդհանուր զարգացման համատեքստում, անհրաժեշտ է ապագայի կարելուր խնդիր դիտարկել:

11. Հերթական անգամ հաստատվեց այնպիսի իրավիճակի անընդունելիությունը, երբ հեռարձակվող ալիքը պատկանում է այն իր ուղղակի քաղաքական շահերին, մասնավորապես՝ իբրեւ թեկնածու ընտրություններին մասնակցելուն ծառայեցնող անձին: Փաստորեն, հանրային ռեսուրսը՝ ինչպիսին հաճախականությունն է, դիտարկվում է բացառապես իբրեւ անձնական քաղաքական նպատակներին հասնելու միջոց: Նման կոլիզիան առկա է Հայաստանի մի քանի ալիքների պարագայում, սակայն առավել ակնհայտը «ԱԼՄ»-ի օրինակն է, որի սեփականատերը ժողովրդական կուսակցության առաջնորդ եւ 2008 թվականի ընտրություններում նախագահի թեկնածու Տիգրան Կարապետյանն է: 2007 թվականի հոկտեմբեր-դեկտեմբերին Տիգրան Կարապետյանին բաժին է ընկել դիտարկման օբյեկտ հանդիսացած քաղաքական գործիչներին «ԱԼՄ»-ում հատկացված ամբողջ եթերաժամանակի 78,4%-ը: Նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում (2008 թ. հունվարի 21-ից փետրվարի 17-ը) Տիգրան Կարապետյանի ակտիվությունն «ԱԼՄ»-ի եթերում մի փոքր նվազեց (օրենքն արգելում է թեկնածուներին այդ ժամանակաշրջանում հաղորդումներ վարել), իսկ իր ալիքում իբրեւ «հյուր» եւ հեռուստանյութերի հերոս, նա արժանացավ նախագահի բոլոր թեկնածուներին հատկացված ընդհանուր եթերաժամանակի 49,8%-ին: Այս խնդրի լուծումը մենք տեսնում ենք ինչպես օրենսդրական դրույթների կոնկրետացման, այնպես էլ՝ գործող օրենսդրության տառին եւ լիցենզիաների տրամադրման պայմաններին առավել հստակ հետեւելու մեջ:

12. Հետազոտված ալիքների մեծ մասի կողմից թեկնածուների նկատմամբ միատեսակ վերաբերմունքը (ինչն ամենից առաջ արտահայտվել է Սերժ Սարգսյանի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի լուսաբանումներում) թույլ են տալիս դիտարկման խմբին եզրակացնելու համաձայնեցված (կամ ուղղորդված) քաղաքականության մասին: Համաձայնեցվածությունն արտահայտվել է եւ ընտրությունների նախաշեմին, եւ նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում: Այսպես, 2007 թվականի հոկտեմբեր-նոյեմբերին Լեւոն Տեր-Պետրոսյանի լուսաբանումը հետազոտված բոլոր ալիքներում բաժանվել է երեք փուլի. առաջին՝ քիչ թե շատ հանգիստ լուսաբանում, երկրորդ՝ համարյա լրիվ լռություն, երրորդ՝ հախուռն քննադատություն: Տրամադրությունների փոփոխության նման համաժամանակյա ընթացքը դժվար թե պատահականություն է: Եթե դատենք դիտարկման արդյունքներից, ընտրարշավի լուսաբանման սեփական քաղաքականություն ուներ միայն «Երկիր մեդիա» հեռուստաալիքը: Այն միակն էր, որում իշխող կուսակցությունից թեկնածու Սերժ Սարգսյանը չունեւ նշանային բնութագրիչ հիշատակումների դրական հաշվեկշիռ, իսկ առավել դրական լուսաբանում այստեղ ստացել է Հայ յեղափոխական դաշնակցությունից (ՀՅԴ) նախագահի թեկնածու Վահան Հովհաննեսյանը (նախընտրական քարոզչության 28 օրերի ընթացքում 34 դրական եւ ոչ մի բացասական հիշատակում): Սակայն «Երկիր մեդիան» ավելի շուտ օրինաչափությունը հաստատող

բացառություն էր: «Համաձայնեցված լուսաբանման» մեխանիզմները մասամբ բացահայտելու փորձ էր արված հայկական մի շարք հասարակական կազմակերպությունների 2007 թվականի հոկտեմբերի 19-ին տարածած հայտարարության մեջ: Նրանում մտահոգություն էր արտահայտվում, որ տարբեր մանուլի ակունքներում կազմակերպվող ասուլիսներին դադարել են ներկայանալ հեռարձակվող ՁԼՄ-ների թղթակիցները, ինչպես նաև՝ որ մտահոգիչ տեղեկություններ կան, թե մասնավոր հեռուստաընկերությունների ղեկավարները հրավիրվում են զանազան գերատեսչական մարմիններ, որտեղ նրանց «հորդորում են» անտեսել ընդդիմության որոշ ներկայացուցիչների հրապարակային ելույթները, տաղավարում չհյուրընկալել նրանց, հարցազրույցներ չունենալ եւ չհեռարձակել: Մասնավորապես, ինչպես նշված էր հայտարարության մեջ, հեռուստաընկերություններին «խորհուրդ էր տրված» չլուսաբանել (ոչ դրական, ոչ բացասական համատեքստով) մի քանի քաղաքական ուժերի 2007 թ. հոկտեմբերի 26-ին կայանալիք հանրահավաքը: Իսկ հոկտեմբերի 22-ին տարածվեց նաև Գյումրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերության հիմնադիր Վահան Խաչատրյանի հայտարարությունը, որի առիթը իշխանության տարբեր օղակների կողմից այդ հեռուստաընկերության նկատմամբ նույն նպատակով ճնշումներն էին: Այս ամենը թույլ է տալիս խոսելու թաքնված գրաքննության տարրերի մասին, ինչը Հայաստանում որոշակի դեր է խաղացել ինչպես խորհրդարանական (2007 թ.), այնպես էլ նախագահական (2008 թ.) ընտրություններում:

13. Ներկա ընտրարշավում երեւան եկավ նաև թեկնածուների պատրաստ չլինելը բաց երկխոսության, քննարկումների, ՁԼՄ-ներում բանավեճերի: Չնայած հեռարձակվող ՁԼՄ-ների բոլոր ջանքերին՝ եթերում թեկնածուների միջեւ բանավեճեր կազմակերպել ոչ մեկին չհաջողվեց: Ոչ այնքան հաճախ էին նաև «հյուր ստուդիայում» ժանրի հաղորդումները: Լեւոն Տեր-Պետրոսյանը մերժեց եթերում հարցազրույց տալու բազմաթիվ հրավերները, իսկ Սերժ Սարգսյանը մասնակցեց միայն մեկ նման հաղորդման (Հ1, «Եվրապոլիս»): Նկարագրված խնդիրը մասամբ կարող է բացատրվել կոնկրետ քաղաքական գործիչների նկատմամբ որոշ լրագրողների կողմնակալ մոտեցմամբ, եւ առաջինները, ոչ ձեռնտու լույսով չներկայացվելու համար, խուսափում են ագրեսիվ հարցազրույցներից: Սակայն գլխավոր պատճառը, այսուհանդերձ, որոշ գործիչների փակ լինելն է, ընտրազանգվածի հետ մեծախոսության ձեւով շփվելուն առավելություն տալը:

14. Իրենց հերթին հեռուստաընկերությունների մեծամասնությունը շահագրգռվածություն հանդես չբերեց քննարկումների հրավիրելու անկախ փորձագետների, վերլուծաբանների, ընտրական գործընթացների զանազան կողմերը դիտարկող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների: Սա, ինչպես եւ բանավեճերի բացակայությունը, անշուշտ, սահմանափակում էր իրադարձությունները ըմբռնելու, գիտակցված ընտրություն կատարելու լսարանի հնարավորությունները: Այստեղ էլ կարելի է նկատել հեռուստաալիքների որոշակի համաձայնեցված (ուղղորդված) քաղաքականություն, եւ այստեղ էլ բացառություն էր «Երկիր մեդիան», որը փորձագիտական կարծիքների նկատմամբ եւ քաղաքացիական հասարակության հետ համագործակցության շահագրգռություն ցուցաբերեց:

15. Ընտրողների տեղեկացվածության վրա ազդեց նաև քարոզչական նյութերի համար հատկացված ժամանակը հանրային (ԿԸՀ 2008 թվականի հունվարի 21-ի որոշմամբ՝ Հ1-ում՝ ժամը 17.15-ից, Հայաստանի հանրային ռադիոյում՝ ժամը 13.30-ից) եւ հետազոտված մասնավոր ալիքներում (ժամը 17.00-ի եւ 19.00-ի միջակայքում): Այլ խոսքով՝ այն ժամերին, երբ ընտրողների մեծամասնությունն աշխատանքային օրերին կամ աշխատանքի/դասի էր, կամ՝ տուն վերադառնալու ճանապարհին:

16. Ինչպես եւ նախորդ բոլոր ընտրությունների ժամանակ, Հայաստանի մարզերի բնակչությունը նշանակալիորեն ավելի քիչ տեղեկատվության աղբյուրներ ուներ: Երկրի շատ բնակավայրերում մարդկանց մատչելի են միայն երկու-երեք հեռուստաալիքներ, եւ առկա իրավիճակը խորանում էր նրանով, որ տեղական մի ամբողջ խումբ հեռարձակողներ էականորեն նվազեցրել էին ընտրական գործընթացների լուսաբանումները:


17. Ներկա ընտրարշավի ընթացքում ՀՀ իշխանությունների ներկայացուցիչները փորձ արեցին վարկաբեկելու երեւանի մամուլի ակունքի եւ «ԹԻՄ» հետազոտությունների կենտրոնի իրականացրած ՁԼՄ-ների դիտարկումը: ՀՀ որոշ բարձրաստիճան ղեկավարներ, միջազգային պաշտոնյաների եւ լրագրողների հետ զրույցներում անուղղակիորեն նշում էին մեր հետազոտության արդյունքների «ոչ օբյեկտիվությունը»: Սա հետեւանք էր դիտարկման արդյունքների նկատմամբ միջազգային կազմակերպությունների ուշադրության եւ իշխանությունների այն մտահոգության, թե հետազոտության արդյունքները կարող են ազդել նախագահական ընտրությունների վերաբերյալ դիտորդների գնահատականների վրա: 2007 թվականի դեկտեմբերի 26-ին ԵՄԱ-ն եւ «ԹԻՄ»-ը հանդես եկան հայտարարությամբ, որում կտրականապես հերքեցին իրենց աջառու լինելու մասին

ակնարկները եւ բոլոր կասկածողներին առաջարկեցին իրականացնել դիտարկման բաց փորձաքննություն: Սակայն, ինչպես պարզվեց, դիտարկման օբյեկտիվության, ըստ երեւոյթին, ոչ ոք չկասկածեց, եւ, հետեւաբար, դիտողություններն այդ առումով սպեկուլյատիվ բնույթ ունեին:

ԳՐԱՖԻԿՆԵՐ


1 հոկտեմբերի - 30 նոյեմբերի, 6-20 դեկտեմբերի 2007 թ., 21 հունվարի - 17 փետրվարի 2008 թ.

8 հեռարձակվող ՁԼՍ-ների խմբագրական լուսաբանումներում քաղաքական գործիչներին հատկացված ընդհանուր եթերաժամանակը (վայրկյաններով) դիտարկման ողջ ընթացքում. Հ1, «ԱԼՄ», «Արմենիա», Հ2, «Երկիր մեդիա», «Կենտրոն», «Շանթ», Հայաստանի հանրային ռադիո



1 հոկտեմբերի - 30 նոյեմբերի, 6-20 դեկտեմբերի 2007 թ., 21 հունվարի - 17 փետրվարի 2008 թ.


8 հեռարձակվող ՋԼՄ-ների խմբագրական լուսաբանումներում ՀՀ նախագահի 9 թեկնածուներին հատկացված եթերաժամանակը (վայրկյաններով) դիտարկման ողջ ընթացքում. Հ1, «ԱԼՄ», «Արմենիա», Հ2, «Երկիր մեդիա», «Կենտրոն», «Շանթ», Հայաստանի հանրային ռադիո



*Այս գործիչը 2007 թվականի հոկտեմբեր-նոյեմբերին դիտարկման օբյեկտ չի եղել

1 հոկտեմբերի - 30 նոյեմբերի, 6-20 դեկտեմբերի 2007 թ., 21 հունվարի - 17 փետրվարի 2008 թ.


8 հեռարձակվող ՋԼՍ-ների խմբագրական լուսաբանումներում ՀՀ նախագահի 9 թեկնածուների հիշատակումների քանակը եւ բնույթը (միավորներով) դիտարկման ողջ ընթացքում. Հ1, «ԱԼՄ», «Արմենիա», Հ2, «Երկիր մեդիա», «Կենտրոն», «Շանթ», Հայաստանի հանրային ռադիո



*Այս գործիչը 2007 թվականի հոկտեմբեր- նոյեմբերին դիտարկման օբյեկտ չի եղել

1 հոկտեմբերի - 30 նոյեմբերի, 6-20 դեկտեմբերի 2007 թ.


Հետազոտված հանրային հեռարձակվող ՁԼՄ-ների խմբագրական լուսաբանումներում ՀՀ նախագահի 9 թեկնածուներին հատկացված եթերաժամանակը (վայրկյաններով) նախագահական ընտրությունների նախաշեմին. Հ1 եւ Հայաստանի հանրային ռադիո



*Այս գործիչը 2007 թվականի հոկտեմբեր-նոյեմբերին դիտարկման օրյեկտ չի եղել

1 հոկտեմբերի - 30 նոյեմբերի, 6-20 դեկտեմբերի 2007 թ.


Չեռագրված հանրային հեռարձակվող ՁԼՄ-ների խմբագրական լուսաբանումներում ՀՀ նախագահի 9 թեկնածուների հիշատակումների քանակը եւ բնույթը (միավորներով) նախագահական ընտրությունների նախաշեմին. Հ1 եւ Հայաստանի հանրային ռադիո



*Այս գործիչը 2007 թվականի հոկտեմբեր-նոյեմբերին դիտարկման օբյեկտ չի եղել

1 հոկտեմբերի - 30 նոյեմբերի, 6-20 դեկտեմբերի 2007 թ.


Հետազոտված մասնավոր հեռարձակվող ՁԼՄ-ների խմբագրական լուսաբանումներում ՀՀ մախագահի 9 թեկնածուներին հատկացված եթերաժամանակը (վայրկյաններով) նախագահական ընտրությունների մախաշեմին. «ԱԼՄ», «Արմենիա», Հ2, «Երկիր մեդիա», «Կենտրոն», «Շանթ»



*Այս գործիչը 2007 թվականի հոկտեմբեր-նոյեմբերին դիտարկման օբյեկտ չի եղել

1 հոկտեմբերի - 30 նոյեմբերի, 6-20 դեկտեմբերի 2007 թ.


Հետազոտված մասնավոր հեռարձակվող ՁԼՄ-ների խմբագրական լուսաբանումներում ՀՀ նախագահի 9 թեկնածուների հիշատակումների քանակը եւ բնույթը (միավորներով) նախագահական ընտրությունների նախաշեմին. «ԱԼՄ», «Արմենիա», ՀԶ, «Երկիր մեդիա», «Կենտրոն», «Շանթ»



*Այս գործիչը 2007 թվականի հոկտեմբեր-նոյեմբերին դիտարկման օբյեկտ չի եղել


21 հունվարի - 17 փետրվարի 2008 թ.

Հետազոտված հանրային հեռարձակվող ՁԼՄ-ների խմբագրական լուսաբանումներում ՀՀ նախագահի 9 թեկնածուներին հատկացված եթերաժամանակը (վայրկյաններով) նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում. Հ1 եւ Հայաստանի հանրային ռադիո




21 հունվարի - 17 փետրվարի 2008 թ.

Հետազոտված հանրային հեռարձակվող ՁԼՄ-ների խմբագրական լուսաբանումներում ՀՀ նախագահի 9 թեկնածուների հիշատակումների քանակը եւ բնույթը (միավորներով) նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում. Հ1 եւ Հայաստանի հանրային ռադիո




21 հունվարի - 17 փետրվարի 2008 թ.

Հետազոտված մասնավոր հեռարձակվող ՁԼՄ-ների խմբագրական լուսաբանումներում ՀՀ նախագահի 9 թեկնածուներին հատկացված եթերաժամանակը (վայրկյաններով) նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում. «ԱԼՄ», «Արմենիա», ՀԶ, «Երկիր մեդիա», «Կենտրոն», «Շանթ»



21 հունվարի - 17 փետրվարի 2008 թ.

Հետազոտված մասնավոր հեռարձակվող ՁԼՍ-ների խմբագրական լուսաբանումներում ՀՀ նախագահի 9 թեկնածուների հիշատակումների քանակը եւ բնույթը (միավորներով) նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում. «ԱԼՄ», «Արմենիա», ՀԶ, «Երկիր մեդիա», «Կենտրոն», «Շանթ»



ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ՁԼՍ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (1-31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2007)

2008 ԹՎԱԿԱՆԻ նախագահական ընտրությունների պաշտոնական քարոզչությանը նախորդող ժամանակաշրջանում երեւան եկան մի շարք միտումներ, որոնք դիտարկման խումբն արձանագրել էր 2007 թվականի խորհրդարանական ընտրություններից առաջ:

Հետազոտվող ալիքներից դարձյալ առավել «քաղաքականացված է» (քաղաքական կյանքին հատկացվող ուշադրության իմաստով) «ԱԼՄ»-ն, նրան մեծ տարբերությամբ հետեւում են «Կենտրոնը» եւ «Երկիր մեդիան»: Սակայն, այս անգամ վերջիններիս միջեւ, «Երկիր մեդիային» մի փոքր գերազանցելով, տեղ է գրավել ՀԶ-ը: Հետազոտված երկու հանրային ալիքներից, ինչպես որ 2007 թվականի գարնանը, ռադիոն քաղաքականությանը մի փոքր ավելի ուշադրություն է դարձնում, քան հեռուստատեսությունը: Հետաքրքիր է այս փաստը համեմատել 2007 թվականի հուլիսին Միջազգային հանրապետական ինստիտուտի (ԱՄՆ) Հայաստանում իրականացրած հարցման արդյունքների հետ: Համաձայն դրա՝ հեռուստատեսությունը քաղաքական ինֆորմացիայի աղբյուր են համարել հարցվածների 99%-ը, իսկ ռադիոն՝ 46%-ը:

Քաղաքական գործընթացներին նախկինի նման ամենից քիչ ուշադրություն դարձրել է «Արմենիան»: Քաղաքական գործիչներին այս ՀԸ հատկացրած եթերաժամանակը 26 անգամ քիչ է, քան «ԱԼՄ»-ում, մոտ 11 անգամ քիչ, քան «Կենտրոնում» եւ ավելի քան 2 անգամ քիչ, քան «Շանթում», որն ունի երկրորդ ամենացածր արդյունքը:

«ԱԼՄ»-ի ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ քաղաքական գործիչներին հիմնականում կենտրոնացած է այդ ՀԸ սեփականատեր, ժողովրդական կուսակցության առաջնորդ Տիգրան Կարապետյանի անձի վրա. նրան բաժին է ընկել սույն հետազոտության օբյեկտ հանդիսացող քաղաքական գործիչներին այդ հեռուստաընկերությունում հատկացված եթերաժամանակի ավելի քան 82%-ը: Բացառապես սեփական հեռուստաընկերության հաշվին (որում Տիգրան Կարապետյանին բաժին է ընկել բոլոր 7 հեռուստաընկերություններում իրեն հատկացված եթերաժամանակի 99,2%-ը) նա ստացել է երկու անգամ ավելի շատ համախառն լուսաբանում, քան ՀՀ վարչապետ, Հանրապետական կուսակցությունից նախագահի հավանական (2007 թվականի հոկտեմբերի դրությամբ) թեկնածու Սերժ Սարգսյանը: Մյուս հեռարձակվող ընկերություններում քաղաքական գործիչներից մեկի վրա շեշտադրված ուշադրություն դարձրել են «Արմենիան», «Շանթը» եւ ՀԶ-ը. սրանցից յուրաքանչյուրում Սերժ Սարգսյանին բաժին է ընկել եթերաժամանակի կեսից ավելին:

Երկրորդ է, Սերժ Սարգսյանի դեպքում, անհրաժեշտ է ընդգծել, որ լուսաբանումների գերակշիռ մասը բոլոր հեռուստաընկերություններում (91%) եւ Հանրային ռադիոյում (85%) նա ստացել է իբրեւ վարչապետ, այսինքն՝ իր պաշտոնական/մասնագիտական պարտականություններն իրականացնող անձ: Տիգրան Կարապետյանի դեպքում՝ չափազանց դժվար է սահմանազատել այն հաղորդումները, որոնք նա հանդես է գալիս իբրեւ լրագրող (սույն դիտարկման շրջանակներում դա արձանագրվում է իբրեւ պաշտոնական/մասնագիտական գործունեություն), եւ նրանք, որոնցում նա հանդես է գալիս իբրեւ եթեր հրավիրված քաղաքական գործիչ: Երկու դեպքում էլ «ԱԼՄ» հեռուստաալիքում գերիշխում են հասարակական-քաղաքական կյանքի տարբեր կողմերի վերաբերյալ նրա տեսակետները, կարծիքները, գնահատականները:

Վերադառնալով Սերժ Սարգսյանին՝ անհրաժեշտ է նշել, որ իբրեւ պաշտոնատար նրա հաճախակի ու երկարատեւ երեւալը եթերում անվիճելիորեն նույնպես ազդեցություն է ունենում ընտրողների վրա: Դիտարկման խումբը տեղին է համարում վարչապետի ցուցանիշները համեմատել մյուս բարձրաստիճան պաշտոնյայի (ուս պաշտոնական գործունեության մեծ մասը նույնպես հասարակությանը հետաքրքրում է, եւ ով նույնպես տվյալ հետազոտության օբյեկտ է) համախառն եթերաժամանակի հետ: Նկատի ունենք ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանին, ում հոկտեմբերին հետազոտվող հեռուստաընկերությունները ավելի քան չորս անգամ քիչ ժամանակ են հատկացրել, քան վարչապետին: Այս անհամապատասխանությունը հիմք է տալիս ենթադրելու, որ հեռարձակվող ալիքների ուշադրությունների տարբերությունը կապված է հենց Սերժ Սարգսյանի՝

նախագահի թեկնածու առաջադրվելու, այլ խոսքով՝ նրա՝ անմիջականորեն պաշտոնականին չառնչվող, զուտ քաղաքական գործունեության հետ:

Համախառն լուսաբանմամբ երրորդ տեղում է հայտնվել Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Ընդ որում, հետագուտված ալիքների մեծ մասում այս քաղաքական գործիչը երկրորդն էր՝ զիջելով միայն Սերժ Սարգսյանին եւ («Կենտրոնում») «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանին, իսկ «Երկիր մեդիայում»՝ նույնիսկ առաջինն էր: Փաստորեն, եթե հաշվի չառնենք «ԱԼՄ»-ի եթերային ցուցանիշները, կարելի ասել, որ հեռարձակվող ՁԼՄ-ների ուշադրությունը կենտրոնացած էր նախագահի երկու հավանական թեկնածուների՝ Սերժ Սարգսյանի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի վրա: Սակայն նրանց լուսաբանման բնույթը էականորեն տարբերվում էր: Եթե վարչապետը բոլոր ալիքներով հիշատակվել է ավելի հաճախ դրական, քան բացասական համատեքստում (56 դրական եւ 2 բացասական), ապա առաջին նախագահը՝ ընդհակառակը (6 դրական եւ 111 բացասական): Տեր-Պետրոսյանի հիշատակումների ընդհանուր թվի (389) մեջ բացասականը շատ մեծ է՝ համարյա մեկ երրորդը: Եվ ընդհանրապես, բնութագրելով հոկտեմբերյան եթերը, կարելի է արձանագրել որոշ քաղաքական գործիչների, մասնավորապես Գագիկ Ծառուկյանի (տես՝ ստորել) եւ Տիգրան Կարապետյանի նշանային բնութագրիչ հիշատակումների աննախադեպ մեծ բաժինը (երկու դեպքում էլ դրականի ակնհայտ գերակշռությամբ):

Հոկտեմբերին հետագուտված ՁԼՄ-ներում Լեւոն Տեր-Պետրոսյանին ներկայացնելու բնույթը երեք փուլ ունեցավ: Ամսվա առաջին կեսում հեռարձակվող ալիքները հետաքրքրություն ցուցաբերեցին առաջին նախագահի քաղաքականությունը վերադառնալու փաստին եւ դրան քիչ թե շատ զուսպ գնահատական էին տալիս: Բացասականն առկա էր հիմնականում այլ քաղաքական գործիչների մեկնաբանություններում, եւ ավելի քիչ չափով՝ լրագրողական գնահատականներում:

Հետագա մոտ տասը օրերին Տեր-Պետրոսյանի նկատմամբ հեռարձակվող ՁԼՄ-ների հետաքրքրությունը պակասեց: Հենց այդ փուլում (հոկտեմբերի 19-ին) մի շարք հասարակական կազմակերպություններ հանդես եկան հայտարարությամբ, որում մտահոգություն էր արտահայտվում, որ տարբեր մամուլի ակումբներում կազմակերպվող ասուլիսներին դադարել են ներկայանալ հեռարձակվող ՁԼՄ-ների թղթակիցները, ինչպես նաեւ՝ որ մտահոգիչ տեղեկություններ կան, թե մասնավոր հեռուստաընկերությունների ղեկավարները հրավիրվում են զանազան գերատեսչական մարմիններ, որտեղ նրանց «հորդորում են» անտեսել ընդդիմության որոշ ներկայացուցիչների հրապարակային ելույթները, չհյուրընկալել նրանց, հարցազրույցներ չունենալ եւ չհեռարձակել: Մասնավորապես, ինչպես նշված էր հայտարարության մեջ, հեռուստաընկերություններին «խորհուրդ է տրված» չլուսաբանել (ոչ դրական, ոչ բացասական համատեքստով) մի քանի քաղաքական ուժերի հոկտեմբերի 26-ին կայանալիք հանրահավաքը: Իսկ հոկտեմբերի 22-ին տարածվեց նաեւ Գյումրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերության հիմնադիր Վահան Խաչատրյանի հայտարարությունը, որի առիթը իշխանության տարբեր օղակների կողմից այդ հեռուստաընկերության նկատմամբ նույն նպատակով ճնշումներն էին:

Վերջապես, երրորդ փուլի սկիզբը համընկավ հոկտեմբերի 26-ի հանրահավաքին, որում Տեր-Պետրոսյանը հանդես եկավ գործնականում առաջին նախընտրական ելույթով: Այս պահից եւ մինչեւ ամսվա վերջը առաջին նախագահը դարձյալ հայտնվեց ուշադրության կենտրոնում, սակայն իբրեւ կանոն, հետագուտվող ՁԼՄ-ներում հիշատակումները, արդեն ներառյալ նաեւ լրագրողական գնահատականները, բացասական համատեքստ ունեին: Համեմատության համար ասենք, որ Լեւոն Տեր-Պետրոսյանի բացասական հիշատակումների 15%-ը արձանագրվել է հոկտեմբերի առաջին կեսին, իսկ 85%-ը՝ երկրորդ (ընդ որում՝ առյուծի բաժինը՝ վերջին ոչ լրիվ շաբաթին՝ հոկտեմբերի 26-ից 31-ին):

Դիտարկման խմբի հոկտեմբերին արձանագրած միտումը բնորոշ էր բոլոր հետագուտված հեռուստաալիքներին: Որոշ բացառություն էր «Արմենիան», որտեղ հոկտեմբերի առաջին եւ երկրորդ կեսերի Տեր-Պետրոսյանի բացասական հիշատակումների միջեւ տարբերությունն այդքան ակնհայտ չէր: Այս ամենը հնարավորություն է տալիս եզրակացնելու, օգտվենք մի շարք հասարակական կազմակերպությունների վերը հիշատակված հայտարարության տերմինալոգիայից, հայկական առաջատար հեռարձակվող ընկերությունների տեղեկատվական-քաղաքական հաղորդումների բովանդակությունը կարգավորող «անտեսանելի ձեռքի» առկայության մասին:

Հետագուտված հեռարձակվող ալիքներում հայկական քաղաքական եթերի երեք առաջատարների հետ համադրելի ուշադրության է արժանացել նաեւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանը: Նրա նշանակալի գերազանցումը հետագոտության օբյեկտ հանդիսացած եւ 5-րդ ու ավելի ցածր տեղեր զբաղեցրած այլ քաղաքական գործիչներին, ապահովվել

է, գլխավորապէս, «Կենտրոն» հեռուստաալիքի կողմից, որտեղ Ծառուկյանն ամենաշատ լուսաբանումն է ստացել: Ի դեպ, «Բարգավաճ Հայաստանի» առաջնորդը բոլորից առաջ է դրական հիշատակումների թվով: Ընդ որում, այդ հիշատակումների (ինչպէս եւ համախառն եթերաժամանակի) կեսից ավելին նա ստացել է հենց «Կենտրոնում»:

Առաջատարների հնգյակը եզրափակում է ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, ում ՁԼՄ-ները, հավանաբար, արդեն դադարել են դիտարկել իբրեւ նախագահի հավանական թեկնածու: Արտաքին գերատեսչության ղեկավարը տեղեկատվական-քաղաքական հաղորդումներում երեւում է միայն իբրեւ պաշտոնատար անձ: Իսկ եթերաժամանակի այն ամբողջ 657 վայրկյանը, որում Օսկանյանն այլ դերում է, բաժին է ընկնում ՀՀ-ի «Էլի մի ձայն» հունորիստական մուլտիպլիկացիոն ծրագրին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ դիտարկման համախառն արդյունքները հնարավորություն են տալիս հեշտությամբ առանձնացնելու այն հնարավոր թեկնածուներին եւ նրանց առավել ազդեցիկ կողմնակիցներին, ում ընդունված է կոչել ընդդիմադիր (Լեւոն Տեր-Պետրոսյան, Արթուր Բաղդասարյան, Արտաշես Գեղամյան, Արամ Կարապետյան, Րաֆֆի Հովհաննիսյան, Ստեփան Դեմիրճյան, Արամ Չ. Սարգսյան) նրանցից՝ ում այս կամ այն չափով վերագրում են իշխանությանը (Սերժ Սարգսյան, Գագիկ Ծառուկյան, Վարդան Օսկանյան, Արմեն Ռուստամյան, Վահան Հովհաննեսյան). առաջինների նշանային բնութագրիչ հիշատակումների հաշվեկշիռը բացասական է, երկրորդներինը՝ դրական:

Տարբեր ճամբարներ ներկայացնող քաղաքական գործիչների համեմատաբար ավելի լայն ընդգրկում (ինչպէս հիշատակումների թվով, եթերաժամանակի ծավալով, այնպէս էլ «հյուր ստուդիայում» ձեւաչափով հրավիրված անձանց ցուցակով) արձանագրվել է «Երկիր մեղիայում» եւ «Կենտրոնում»: Ամենաքիչը՝ «Արմենիայում» եւ «Շանթում», ինչն օրինաչափ է՝ հաշվի առնելով այս հեռուստաալիքներում քաղաքական պորբլեմատիկային ամենաքիչ ուշադրությունը:

Խոսելով հայկական եթերի անբավարար քաղաքական բազմազանության մասին, չի կարելի չնշել նաեւ ինչպէս իշխանամետ, այնպէս էլ ընդդիմադիր ճամբարի քաղաքական գործիչների նշանակալի մասի անմատչելի լինելը: Նրանք բավականին հաճախ են խուսափում հարցազրույցներից, հրաժարվում են պատասխանել լրագրողների՝ իրենց համար անցանկալի թեմաներին վերաբերող հարցերին: Նման «ոճը», համեմայն դեպս նախընտրական պայքարի ներկա փուլում, բնորոշ է, մասնավորապէս, կառավարող կոալիցիայի անդամ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ղեկավար կազմին եւ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին: Հանրության հետ մենախոսության ձեւով (հանրահավաքներում, զովազդային բնույթի նյութերով) շփումը, բանավեճի, երկխոսության պակասը վկայում են քաղաքական արշավը զուտ քարոզչական, պոպուլիստական ձեւերով վարելուն հակվածության մասին. դրանք հավանական ընտրողներին հնարավորություն չեն տալիս ստանալու իրենց հետաքրքրող շատ հարցերի պատասխանները, կատարելու գիտակցված ընտրություն:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ դիտարկման խումբն արձանագրել է մի շարք գովազդային նյութեր, որոնք ուղղակիորեն կան անուղղակի նպաստում էին դիտարկման օբյեկտ հանդիսացած քաղաքական գործիչների դրական իմիջի ձեւավորմանը: Այսպէս, «Երկիր մեղիա»-յով հայտարարվում էր վարչապետ Սերժ Սարգսյանի հովանավորությամբ բարձր տեխնոլոգիաների բնագավառի միջոցառման մասին: Նույն հեռուստաալիքում հայտարարվում էր ՀՀԿ կողմից նախագահի երկու թեկնածուների՝ Վահան Հովհաննեսյանի եւ Արմեն Ռուստամյանի՝ ընտրողների հետ հանդիպումների մասին: «Կենտրոնի» եւ ՀՀ-ի եթերով բազմիցս ցուցադրվեց Երեւանի կոնյակի-գինու-օղու «Արարատ» կոմբինատի 130-ամյակին նվիրված գովազդային հոլովակը, որում գլխավոր գործող անձը այդ ձեռնարկության սեփականատեր Գագիկ Ծառուկյանն էր:

Դիտարկման խումբը ուշադրություն է հրավիրում նաեւ իբրեւ խմբագրական եթեր հեռարձակված այն նյութերի վրա, որոնք ունեին զովազդի որոշ տարրեր: Այսպէս, «Կենտրոնի», «ԱԼՄ»-ի եւ ՀՀ-ի եթերով ցուցադրվեց նույն հաղորդումը խաղողի բերքի իրացման խնդիրներ ունեցող գյուղացիների եւ այդ խաղողը գնելու՝ «Մուլտի գրուպ» կոնցեռնի ու նրա ղեկավար Գագիկ Ծառուկյանի նախաձեռնության մասին: Այստեղ խնդիրը հաղորդման հաճախությունն էր եւ դրա հայտնվելը միանգամից երեք ալիքներում:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

1-31 հոկտեմբերի 2007 թ.

8 հեռարձակվող ՋԼՍ-ների խմբագրական եւ վճարովի լուսաբանումներում քաղաքական գործիչների հիշատակումների քանակը եւ բնույթը (դրական, բացասական, չեզոք) ու նրանց հատկացված եթերաժամանակը. 31, «ԱԼՄ», «Արմենիա», 32, «Երկիր մեդիա», «Կենտրոն», «Շանթ», Հայաստանի հանրային ռադիո

	Քաղաքական գործիչներ	Խմբագրական լուսաբանում							Վճարովի հաղորդումներ եւ գովազդ/հայտարարություն						
		Հիշատակումների քանակը (միավոր)	Հիշատակումների բնույթը			Քաղաքական գործիչին հատկացված ընդհանուր եթերաժամանակը (վրկ.)	Քաղաքական գործիչի պաշտոնական եւ մասնագիտական գործունեության լուսաբանումը (վրկ.)	Մասնագիտական եւ (կամ) պաշտոնական պարտականության հետ չկապված գործունեության լուսաբանումը (վրկ.)	Հիշատակումների քանակը (միավոր)	Հիշատակումների բնույթը			Քաղաքական գործիչին հատկացված ընդհանուր եթերաժամանակը (վրկ.)	Քաղաքական գործիչի պաշտոնական եւ մասնագիտական գործունեության լուսաբանումը (վրկ.)	Մասնագիտական եւ (կամ) պաշտոնական պարտականության հետ չկապված գործունեության լուսաբանումը (վրկ.)
			+	-	0					+	-	0			
1.	Տիգրան Կարապետյան	68	28	3	37	87627	55364	32263	0	0	0	0	0	0	0
2.	Սերժ Սարգսյան	794	56	2	736	52892	47592.6	5299.4	29	0	0	29	1827	1827	0
3.	Լեւոն Տեր-Պետրոսյան	389	6	111	272	31427.9	0	31427.9	0	0	0	0	0	0	0
4.	Գագիկ Ծառուկյան	136	74	1	61	24960.7	4461.5	20499.2	42	42	0	0	4284	0	4284
5.	Վարդան Օսկանյան	258	2	0	256	15771	15114	657	0	0	0	0	0	0	0
6.	Արթուր Բաղդասարյան	74	0	5	69	9908.4	131	9777.4	0	0	0	0	0	0	0
7.	Արմեն Ռուստամյան	136	9	0	127	7151.6	2014	5137.6	10	10	0	0	282	0	282
8.	Պարույր Հայրիկյան	74	4	0	70	6759.5	0	6759.5	0	0	0	0	0	0	0
9.	Վահան Հովհաննեսյան	227	6	0	221	5899.1	2920.5	2978.6	10	10	0	0	282	0	282
10.	Արտաշես Գեղամյան	116	2	5	109	5645.9	0	5645.9	0	0	0	0	0	0	0
11.	Վազգեն Մանուկյան	119	0	1	118	2496.7	0	2496.7	0	0	0	0	0	0	0
12.	Արամ Կարապետյան	65	0	4	61	2471.5	0	2471.5	0	0	0	0	0	0	0
13.	Արամ Հարությունյան	8	0	0	8	1386	0	1386	0	0	0	0	0	0	0
14.	Րաֆֆի Հովհաննիսյան	74	0	4	70	1240.6	252	988.6	0	0	0	0	0	0	0
15.	Ստեփան Դեմիրճյան	87	9	10	68	1064.6	0	1064.6	0	0	0	0	0	0	0
16.	Վիկտոր Դալլաքյան	30	0	1	29	785.5	785.5	0	0	0	0	0	0	0	0
17.	Արամ Զ. Սարգսյան	36	0	4	32	309	0	309	0	0	0	0	0	0	0
18.	Սամվել Բաբայան	7	0	0	7	295	0	295	0	0	0	0	0	0	0
19.	Գուրգեն Արսենյան	2	0	1	1	11	0	11	0	0	0	0	0	0	0
	Ընդամենը	2700	196	152	2352	258103	128635.1	129467.9	91	62	0	29	6675	1827	4848

1-31 հոկտեմբերի 2007 թ.

Հետազոտված հեռուստառադիոընկերությունների բանավիճային հաղորդումներին մասնակցելու համար հրավիրված քաղաքական գործիչներ

Քաղաքական գործիչներ	Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք (Հ1)	ԱԼՄ	Արմենիա	Հայկական երկրորդ հեռուստաալիք (Հ2)	Երկիր Մեդիա	Կենտրոն	Շանթ	Հայաստանի հանրային ռադիո	Ընդամենը
Տիգրան Կարապետյան	0	16	0	0	0	0	0	0	16
Արթուր Բաղդասարյան	0	1	0	0	2	1	0	0	4
Պարույր Հայրիկյան	2	0	0	0	0	2	0	0	4
Արտաշես Գեղամյան	1	0	0	0	1	0	0	0	2
Արմեն Ռուստամյան	0	0	0	0	1	1	0	0	2
Արամ Կարապետյան	0	0	0	0	0	1	0	0	1
Արամ Հարությունյան	0	0	0	0	1	0	0	0	1
Գուրգեն Արսենյան	0	0	0	0	0	0	0	0	0
Սամվել Բաբայան	0	0	0	0	0	0	0	0	0
Վիկտոր Դալլաքյան	0	0	0	0	0	0	0	0	0
Ստեփան Դեմիրճյան	0	0	0	0	0	0	0	0	0
Գագիկ Ծառուկյան	0	0	0	0	0	0	0	0	0
Վահան Հովհաննեսյան	0	0	0	0	0	0	0	0	0
Րաֆֆի Հովհաննիսյան	0	0	0	0	0	0	0	0	0
Վազգեն Մանուկյան	0	0	0	0	0	0	0	0	0
Արամ Զավենի Սարգսյան	0	0	0	0	0	0	0	0	0
Սերժ Սարգսյան	0	0	0	0	0	0	0	0	0
Լեւոն Տեր-Պետրոսյան	0	0	0	0	0	0	0	0	0
Վարդան Օսկանյան	0	0	0	0	0	0	0	0	0
Ընդամենը	3	17	0	0	5	5	0	0	30

ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՇՆՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ՁԼՍ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (1-30 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2007)

2007 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻՆ 7 հեռուստատալիքների եւ 1 ռադիոտալիքի դիտարկման արդյունքներով ստացված պատկերը շատ բանով կրկնում էր հոկտեմբերինը: Ընդ որում՝ մի շարք միտումներ ավելի ընդգծվեցին: Հոկտեմբերի համեմատ նոյեմբերին խմբագրական լուսաբանումներում համարյա մեկ քառորդով ավելացել է դիտարկման օբյեկտ հանդիսացող քաղաքական գործիչներին նվիրված նյութերի ընդհանուր ծավալը: Այս հանգամանքը կարող է վկայել, որ նախընտրական մրցավազքը թափ է հավաքում:

Եականորեն մեծացել է նաեւ հեռարձակվող ՁԼՍ-ների ուշադրությունը նախագահի երկու հավանական թեկնածուների (որոնց լրագրողներն այս փուլում բնութագրում են իբրեւ ընտրարշավի երկու բեւեռներ)՝ վարչապետ, Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ) նախագահ Սերժ Սարգսյանի եւ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ: Հոկտեմբերի համեմատ համարյա երկու անգամ ավելի ինտենսիվ էր հեռարձակվող ՁԼՍ-ների կողմից նաեւ «Բարգավաճ Հայաստան» (ԲՀԿ) կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանին հատկացված խմբագրական լուսաբանումը: Եթե հաշվի առնենք նաեւ Ծառուկյանին տրամադրված գովազդային ժամանակը, ապա նոյեմբերին նա գերազանցել է նույնիսկ Տեր-Պետրոսյանին: Թեպետ, ԲՀԿ առաջնորդի առավելությունն ապահովվել է երեք հեռուստատալիքների՝ «Կենտրոնի», «ԱԼՍ»-ի եւ Հայկական երկրորդ հեռուստատալիքի (Հ2) հաշվին:

Անհրաժեշտ է նշել, որ Սերժ Սարգսյանի եւ Գագիկ Ծառուկյանի լուսաբանումների ծավալը ձեւավորվում է նրանց՝ եւ իբրեւ մասնագիտական/պաշտոնական գործունեություն իրականացնողների, եւ իբրեւ քաղաքական գործիչների հատկացված էթերաժամանակից: Այն դեպքում, երբ Լեւոն Տեր-Պետրոսյանի ողջ էթերաժամանակը նրան հատկացվել է զուտ իբրեւ քաղաքական գործիչ: Միաժամանակ, կառավարող կոալիցիան կազմող երկու կուսակցությունների (ՀՀԿ եւ ԲՀԿ) առաջնորդների մասնակցությամբ երկու տեսակի նյութերի մեծ մասի բնույթն ու բովանդակությունը լսարանի մոտ նրանց՝ հենց իբրեւ քաղաքական գործիչների տպավորություն է ձեւավորում:

Բացի այդ, Սարգսյանը եւ Ծառուկյանը, որպես կանոն, հիշատակվում են դրական կամ չեզոք համատեքստում, այն դեպքում, երբ Տեր-Պետրոսյանը՝ բացասական: Ընդ որում, հեռուստառադիոտալիքների կողմից ՀՀ առաջին նախագահի բացասական լուսաբանումը նոյեմբերին առավել ընդգծված բնույթ է ստացել: Եթե հոկտեմբերին Լեւոն Տեր-Պետրոսյանին բացասական ներկայացնող նյութերի մասնաբաժինը հիշատակումների ընդհանուր քանակի մոտ մեկ երրորդն էր կազմում, ապա նոյեմբերին՝ արդեն մոտ երկու երրորդը (293 բացասական հիշատակում 499-ից): Այլ խոսքով, մենք այսօր հայկական եթերի համար աննախադեպ երեւույթի ականատեսն ենք. հայրենական քաղաքական գործիչներից մեկի նույնիսկ չեզոք (էլ չասենք դրական) լուսաբանումները քանակական առումով զիջում են բացասականներին (196 չեզոք հիշատակում եւ 10 դրական): Հեռարձակվող ՁԼՍ-ների նման վերաբերմունքի աննախադեպությունն առաջին հերթին այն է, որ դա երեւան է գալիս նախընտրական պայքարի այսքան վաղ փուլում:

Նշանային բնութագրիչ հիշատակումների համարյա նույնպիսի մասնաբաժին (70-ը 119-ից) ունի Գագիկ Ծառուկյանը, սակայն, ի տարբերություն Լեւոն Տեր-Պետրոսյանի, դրանք բոլորը դրական են: Սերժ Սարգսյանի հիշատակումներում գերակշռում են չեզոքները, սակայն դրականների եւ բացասականների հարաբերակցությունը (162 եւ 14 համապատասխանաբար) հաստատում է ներկա ընտրարշավի երկու բեւեռների մասին լրագրողական փոխաբերությունը. վարչապետը, ըստ հայկական հեռարձակողների կանխակալության՝ «պլուսն» է, իսկ առաջին նախագահը՝ «մինուսը»:

Հատկապես մտահոգություն է առաջացնում այն հանգամանքը, որ ՁԼՍ-ների առավել շատ ուշադրությունը գրաված երկու թեկնածուների «բեւեռային» լուսաբանումը ամբողջությամբ բնորոշ է Հայաստանի հանրային հեռուստատեսության առաջին ալիքին (Հ1) եւ Հայաստանի հանրային ռադիոյին (ՀՌ): Մասնավորապես, վերջինը, որ նախորդ ընտրությունների (2003-ին եւ 2007-ին) լուսաբանման դիտարկումների արդյունքներով նշվում էր իբրեւ առավել հավասարակշիռ ՁԼՍ, այս

անգամ անկողնակալությամբ աչքի չի ընկնում: ՀՀ-ի նոյեմբերյան եթերում Լեւոն Տեր-Պետրոսյանի 105 հիշատակումներից 83-ը բացասական էր եւ ոչ մի դրական, իսկ Սերժ Սարգսյանի 110 հիշատակումներից 21-ը դրական էր եւ ոչ մի բացասական: Հետաքրքիր է նշել, որ ՀՀ-ի աշխատանքի նման կերպափոխումը ժամանակային առումով համընկավ նրա ղեկավարության՝ «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության հաղորդումները հեռարձակելուց հրաժարվելու հետ:

Վերն ասվածի ֆոնին միանգամայն տրամաբանական էր 2007 թվականի դեկտեմբերի 3-ին Երեւանի պետական համալսարանի առաջատար դասախոսների, հայտնի հայ գիտնականների խմբի տարածած հայտարարությունը, որով վերջիններս երկրի հեռուստաընկերություններին, այդ թվում Հայաստանի հանրային հեռուստատեսությանը կոչ էին անում «չնոռանալ հանրության առաջ ունեցած պարտավորությունների մասին եւ վերջ դնել հասարակության լայն շերտերին տեղեկատվական շրջափակման մեջ առնելու քաղաքականությանը»:

Նկարագրված «ընդհանուր կանոնից» բացառություն է «Երկիր մեդիա» հեռուստաալիքը, որտեղ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Սերժ Սարգսյանի դրական ու բացասական հիշատակումների հարաբերակցությունը առավել հավասարակշռված է (5-13 եւ 4-6 համապատասխանաբար), եւ երկուսի դեպքում էլ չեզոք հիշատակումները մեծամասնություն են կազմում: «Երկիր մեդիայի» եթերում ամենաշատ լուսաբանում ունեցել է Հայ յեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) կուսակցությունից նախագահի երկու հավանական թեկնածուներից մեկը՝ Վահան Հովհաննեսյանը (հետագայում հենց նա կուսակցական համագումարի կողմից առաջադրվեց նախագահի թեկնածու), իսկ երկրորդ թեկնածուն՝ Արմեն Ռուստամյանը առավել շատ լուսաբանումներ ունեցած (եւ դիտարկման օբյեկտ հանդիսացած) քաղաքական գործիչների թվում երրորդ տեղում էր՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Սերժ Սարգսյանի միջև: Ընդսին, պետք է նկատի ունենալ, որ ՀՀ երկու առաջնորդների, եւ ամենից առաջ Վահան Հովհաննեսյանի եթերաժամանակի նշանակալի մասը բաժին էր ընկել հեռուստաալիքով այդ կուսակցության՝ նոյեմբերի 30-ին կայացած համագումարի ինտենսիվ լուսաբանմանը:

«Երկիր մեդիայում» Վահան Հովհաննեսյանն ու Արմեն Ռուստամյանը այլ քաղաքական գործիչների համեմատ ավելի հաճախ են հիշատակվել դրական համատեքստում (համապատասխանաբար 13 եւ 11 անգամ) եւ ոչ մի անգամ՝ բացասական: Սա ավելի շատ կապված էր ՀՀ կազմակերպած հասարակական քվեարկության լուսաբանման հետ: Երկու քաղաքական գործիչների վերաբերյալ դրականը հիմնականում հնչել է այդ քվեարկության մասնակիցների հարցազրույցներում: Հիմնականում հիշյալ միջոցառումների (ՀՀ համագումարի եւ հասարակական քվեարկության) լուսաբանմամբ Վահան Հովհաննեսյանը հոկտեմբերի հետ համեմատած նոյեմբերին էականորեն բարելավեց իր համախառն (բոլոր ութ ալիքների եթերաժամանակի) ցուցանիշները եւ նախագահի՝ սույն դիտարկման օբյեկտ հանդիսացող թեկնածուների շարքում զբաղեցրեց չորրորդ տեղը:

Իսկ հետագոտված հեռուստառադիոալիքներում ստացած եթերաժամանակի համախառն ցուցանիշներով առաջին տեղում, ինչպես եւ հոկտեմբերին, ժողովրդական կուսակցության առաջնորդ Տիգրան Կարապետյանն է: Սակայն նրա առաջնությունը ապահովվել է մեկ՝ իր իսկ սեփականությունը հանդիսացող «ԱԼՍ» հեռուստաալիքի շնորհիվ: Կարապետյանին հատկացված համախառն եթերաժամանակի ավելի քան 95 տոկոսը բաժին է ընկնում հենց «ԱԼՍ»-ին: Եթե Տիգրան Կարապետյանը «ԱԼՍ»-ում նույնպիսի ուշադրության արժանանար, ինչպես միջին հաշվով այլ հեռարձակվող ալիքներում, ապա դիտարկման ենթարկված քաղաքական գործիչների շարքում նա կլիներ ոչ թե առաջին, այլ տասներեքերորդ տեղում, իսկ նախագահի թեկնածու առաջադրվածների շարքում՝ յոթերորդ: Ընդ որում, ժողովրդական կուսակցության առաջնորդի դեպքում չափազանց դժվար է սահմանազատել այն հաղորդումները, որում նա հանդես է գալիս իբրեւ լրագրող (սույն դիտարկման շրջանակներում դա արձանագրվում է իբրեւ պաշտոնական/մասնագիտական գործունեություն), եւ նրանք, որոնցում նա հանդես է գալիս իբրեւ քաղաքական գործիչ: Երկու դեպքում էլ «ԱԼՍ» հեռուստաալիքում գերիշխում են հասարակական-քաղաքական կյանքի տարբեր կողմերի վերաբերյալ նրա տեսակետները, կարծիքները, գնահատականները:

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ հեռարձակվող ՋԼՍ-ների թվում «ԱԼՍ»-ի՝ իբրեւ «ամենաքաղաքականացվածի» (քաղաքական կյանքն ուշադրության արժանացնելու իմաստով) առաջատար լինելը պայմանավորվեց հենց Տիգրան Կարապետյանի ֆենոմենով: Այդ հեռուստաալիքը տվյալ հետազոտության օբյեկտ հանդիսացած 19 քաղաքական գործիչներին հատկացված ողջ եթերաժամանակի 75,9%-ը նվիրել է հենց իր սեփականատիրոջը: Եթե «ԱԼՍ»-ն Տիգրան Կարապետյանին նույնքան ուշադրության արժանացներ, որքան միջին հաշվով այլ հեռարձակվողներն են հատկացրել, ապա «քաղաքականացված» լինելու առումով առաջատարը

կլիներ «Կենտրոնը»: Ի միջի այլոց, «Կենտրոնն» էլ ունի իր, թեկուզ եւ ոչ այդքան ակնհայտ, «ֆավորիտը»՝ Գագիկ Ծառուկյանը, որին այդ հեռուստատալիքում 1,3 անգամ ավելի շատ եթերաժամանակ է հատկացվել, քան Լեւոն Տեր-Պետրոսյանին եւ Սերժ Սարգսյանին միասին վերցրած: Ծառուկյանին բաժին է ընկել հետազոտված 19 քաղաքական գործիչներին «Կենտրոնում» հատկացված ողջ եթերաժամանակի 44,1%-ը:

Չորս հեռուստատալիքներում հետազոտվող քաղաքական գործիչներից եւս մեկը (վարչապետ Սերժ Սարգսյանը), բարձր տոկոսներ է ստացել. «Արմենիայում»՝ 76,9% (19 քաղաքական գործիչներին հատկացված ողջ եթերաժամանակից), «Շանթում»՝ 48,9%, Հ1-ում՝ 47,2% եւ Հ2-ում՝ 40,8%: Այս եւ մյուս բոլոր ալիքներում, բացի «Երկիր մեդիայից», վարչապետի դրական հիշատակումների քանակը նշանակալիորեն գերազանցել է բացասականներին. Հ1-ում՝ համապատասխանաբար՝ 26 եւ 2, «ԱԼՍ»-ում՝ 17 եւ 2, «Արմենիայում»՝ 11 եւ 0, Հ2-ում՝ 26 եւ 1, «Կենտրոնում»՝ 41 եւ 1, «Շանթում»՝ 16 եւ 2, Հանրային ռադիոյում՝ 21 եւ 0: Այս ցուցանիշները վկայում են, որ նշված հեռարձակվող ՁԼՍ-ները խիստ հազվադեպ են ներկայացնում կառավարող կոալիցիայից նախագահի թեկնածուի հասցեին քննադատական կարծիքներ, ընդդիմադիր քաղաքական եւ այլ հասարակական գործիչների դիտողություններ:

Ինչպես եւ հոկտեմբերին, նոյեմբերին եւս դիտարկման առարկա հանդիսացած 8 ալիքներից հետազոտվող քաղաքական գործիչներին ամենաքիչ ուշադրության է արժանացրել «Արմենիան» (ավելի քան 14 անգամ քիչ եթերաժամանակ, քան «ԱԼՍ»-ն եւ մոտ 10 անգամ քիչ քան «Կենտրոնը»): Ընդ որում, «Արմենիայում» հետազոտվող քաղաքական գործիչներին հատկացված 114-ից քիչ ավելի րոպեից 88-ը բաժին է ընկել Սերժ Սարգսյանին, այն դեպքում, երբ մնացած 18-ին բաժին է հասել միջին հաշվով մեկուկեսական րոպեից էլ քիչ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ օբյեկտ հանդիսացած 19 քաղաքական գործիչները, հիմնականում, հազվադեպ էին մասնակցում «հյուր ստուդիայում» ձեւաչափով հաղորդումներին: Ակնհայտ բացառություն է միայն Տիգրան Կարապետյանը, սակայն նրա մասնակցությամբ 15 բանավիճային հաղորդումներից 14-ը եթեր է հեռարձակվել իր իսկ սեփականությունը հանդիսացող «ԱԼՍ» հեռուստատալիքով: Մյուս 18 քաղաքական գործիչներից յուրաքանչյուրը նոյեմբերին մասնակցել է միջին հաշվով ընդամենը մեկ նման ձեւաչափի հաղորդման: Գիշտ է, խոսելով առաջատար քաղաքական գործիչների հետ ապագա ընտրողների անբավարար շփումների մասին, չի կարելի չնշել նաեւ ինչպես իշխանամետ, այնպես էլ ընդդիմադիր ճամբարի քաղաքական գործիչների նշանակալի մասի անմատչելի լինելը: Նրանք բավականին հաճախ են խուսափում հարցազրույցներից, հրաժարվում են պատասխանել լրագրողների՝ իրենց համար անցանկալի թեմաներին վերաբերող հարցերին:

Հ1-ում, Հանրային ռադիոյում եւ Հ2-ում այդ ալիքների կողմից նախագահի թեկնածուներին հատկացված ընդհանուր եթերաժամանակով առաջատարը Սերժ Սարգսյանն էր, իսկ երեք այլ ալիքներում՝ «Արմենիայում», «Շանթում» եւ «Երկիր մեդիայում»՝ Վահան Հովհաննեսյանը: «Կենտրոնում» առավել շատ ուշադրության է արժանացել ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը (ճիշտ է՝ այդ ուշադրությունը առավել հաճախ բացասական նշանով էր, տես՝ ստորև): Իսկ «ԱԼՄ»-ում մյուս հետազոտված թեկնածուների համեմատ ավանդական մեծ առավելությամբ առաջատարն է այդ ալիքի սեփականատեր Տիգրան Կարապետյանը. նրա լուսաբանման ծավալը ավելի քան մեկուկես անգամ գերազանցել է նախագահի բոլոր մյուս թեկնածուներին միասին վերցրած «ԱԼՄ»-ում հատկացված ժամանակին: «ԱԼՄ»-ում ժողովրդական կուսակցության առաջնորդի գերազանցությունը պահպանվել է, չնայած նա, ՀՀ Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան, հունվարի 21-ից չի վարել հեղինակային եւ բանավիճային հաղորդումներ: Միաժամանակ, թեկնածուի կարգավիճակը Տիգրան Կարապետյանին հնարավորություն է տվել նախկինից ավելի հաճախ հայտնվելու այլ ալիքների եթերում. դիտարկման ողջ ժամանակաշրջանի ընթացքում առաջին անգամ մյուս 7 ալիքներում նրա լուսաբանումների ծավալը գերազանցել է «ԱԼՄ»-ում նրան հատկացված ժամանակին:

ՍԱԿԱՅՆ, ՓԱՍՏՈՐԵՆ, ներկա ընտրարշավի լուսաբանման գլխավոր խնդիրը մնում է ոչ այնքան հեռարձակվող ալիքների կողմից քաղաքական գործիչների միջև ուշադրության բաշխումը, որքան երկու թեկնածուների՝ Սերժ Սարգսյանի եւ Լևոն Տեր-Պետրոսյանի նշանային բնութագրիչ հիշատակումների մեծ քանակությունն ու նրանց լուսաբանումների միանգամայն հակադիր բնույթը: Վարչապետի 99 նշանային հիշատակումներից (բոլոր 8 ալիքներում) 93-ը եղել է դրական եւ միայն 6-ը բացասական, իսկ առաջին նախագահի դեպքում՝ 72 բացասական եւ ոչ մի դրական:

Ընդ որում կողմնակալությամբ աչքի են ընկել նաեւ հետազոտված երկու հանրային ալիքները: Հ1-ում Սերժ Սարգսյանի նշանային բնութագրիչ հիշատակումների հարաբերակցությունը համապատասխանաբար 22-0 է, իսկ Լևոն Տեր-Պետրոսյանինը՝ 0-11, իսկ Հանրային ռադիոյում, համապատասխանաբար, 7-0 եւ 0-6: Ընդ որում վարչապետի դրական հիշատակումների նշանակալի մասը բաժին է ընկնում նրա ընտրարշավին նվիրված ռեպորտաժներին:

Ընդհանրապես Սարգսյանի դրական լուսաբանումներով առաջատարներն են Հ1-ը եւ «Կենտրոնը» (հարաբերակցությունը վերջինում 24-3): «Կենտրոնը» բոլորից ավելի աչքի է ընկել նաեւ Տեր-Պետրոսյանի բացասական լուսաբանումներով (0-29): Ճիշտ է, առաջին նախագահի 23 բացասական հիշատակումները բաժին են ընկնում «Ի՞նչ են գրում թերթերը» հաղորդմանը, որը տպագիր մամուլի

տեսություն է (պետք է ասել՝ խիստ միտումնավոր, քանի որ, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ հետազոտությունները, Հայաստանի թերթերի շուկան աչքի է ընկնում առավել մեծ բազմազանությամբ ու բազմակարծությամբ, քան հեռուստառադիոթերթը. այսինքն՝ նման քանակի բացասական հիշատակումների համար պետք էր բավականին նպատակամետ ընտրություն կատարել): «Կենտրոնում» Տեր-Պետրոսյանի մնացած 6 բացասական հիշատակումները հնչել են այլ քաղաքական գործիչների շուրթերից:

Ընդհանուր առմամբ, հետազոտված ժամանակաշրջանի բոլոր հիմնական միտումները՝ հոկտեմբեր-դեկտեմբերի համեմատ թեկնածուների նկատմամբ ուշադրության առավել հավասար բաշխումը, Սերժ Սարգսյանի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ բեւեռացված վերաբերմունքը եւ մյուս յոթ թեկնածուների նկատմամբ համեմատական անկողմնակալությունը, բնորոշում են հետազոտված յոթ հեռարձակվող ՁԼՄ-ների գործունեությունը (թեպետ այդ 7-ի թվում է նաեւ «ԱԼՄ»-ն, այն, ինչպես նշվեց վերելում, պահպանում է իր ավանդական առանձնահատկությունը): Սա հիմք է տալիս հիշեցնելու ներկա ընտրարշավի լուսաբանման համաձայնեցված ռազմավարության մասին՝ դիտարկման նախորդ փուլում արված ենթադրությունը: Այս ենթադրությունը չի տարածվում միայն հետազոտված մեկ ալիքի՝ «Երկիր մեդիայի» վրա, որտեղ Սերժ Սարգսյանը չունի նշանային հիշատակումների դրական հաշվեկշիռ (2-2). այստեղ առավել հաճախ դրական է լուսաբանվում ԳՅԴ-ից նախագահի թեկնածու Վահան Հովհաննեսյանը (7 դրական եւ ոչ մի բացասական հիշատակում): Ճիշտ է՝ հիշատակված մյուս ընդհանուր միտումները՝ թեկնածուների միջեւ ուշադրության առավել համաչափ բաշխումը եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի լուսաբանման ընդգծված բացասական հաշվեկշիռը, բնորոշ են նաեւ այս ալիքին:

Բնականաբար, չի կարելի չնշել, որ երկու թեկնածուների (Սերժ Սարգսյանի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի) լուսաբանումների բեւեռացվածությունը 2008-ի հունվարին քանակական առումով այնքան ակնհայտ չէ, որքան հոկտեմբեր-դեկտեմբերին: Եթե դիտարկման նախորդ փուլում Տեր-Պետրոսյանի բացասական հիշատակումների բաժինը հասնում էր, ինչպես նշվել է հաշվետվություններում, աննախադեպ մակարդակի՝ բոլոր հիշատակումների 50%-ի, ապա հունվարի այս 10 օրերին այդ ցուցանիշը հավասար է 26%-ի: Ընդ որում, պետք է նկատի առնել, որ Տեր-Պետրոսյանի՝ բացասական համատեքստով լուսաբանումները մեծ չափով ձեւավորվում էին այլ թեկնածուների՝ նրան հասցեագրված հրապարակային քննադատություններից: Մասնավորապես, հետազոտված ալիքները նշանակալի ուշադրության են արժանացրել առաջին նախագահի հասցեին «Ազգային միաբանությունից» նախագահի թեկնածու Արտաշես Գեղամյանի բացասական արտահայտությունները:

ԱՌԱՎԵԼ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՎԱԾ ԷՐ (երկու չափանիշներով՝ եթերաժամանակի բաշխում եւ նշանային բնութագրիչ հիշատակումների առկայություն ու հարաբերակցություն) ընտրարշավի տվյալ փուլի լուսաբանումը Հանրային ռադիոյում: Այստեղ, ինչպես նաեւ Հ2-ում, 9 թեկնածուներից 7-ը լուսաբանվել է բացառապես չեզոք համատեքստում: Այս ՁԼՄ-ների օրինակն ապացուցում է, որ ենթադրյալ համաձայնեցված (կամ՝ ուղղորդված) քաղաքականությունից (որը տվյալ դեպքում առնչվում է Սերժ Սարգսյանին եւ Լեւոն Տեր-Պետրոսյանին) դուրս հայկական հեռարձակվող ալիքները միանգամայն ընդունակ են ընտրարշավները լուսաբանել միջազգային չափանիշներին համապատասխան:

Հիշյալ երկու ալիքներից բացի, համեմատաբար հավասարակշռված լուսաբանում է արձանագրվել «Արմենիա» եւ «Շանթ» հեռուստաալիքներում: Ճիշտ է, վերջինս, դիտարկված 10 օրերին ութ թեկնածուներին արժանացնելով համադրելի ուշադրության (3 287 վրկ.-ից մինչեւ 1 539 վրկ.), համարյա անտեսել է միայն Տիգրան Կարապետյանին (7 վրկ.):

Ի տարբերություն դիտարկման նախորդ փուլի, հետազոտվող ՁԼՄ-ներն ըստ քաղաքական գործընթացների լուսաբանման ակտիվության ցուցանիշի դասակարգելը տեղին չի լինի՝ այդ ցուցանիշների բավականին «խտության» պատճառով: Թերեւս, մի քիչ ավելի առաջ են անցել Հանրային ռադիոն (35 694 վրկ.) եւ «Կենտրոն» հեռուստաալիքը (30 039 վրկ.): Այդ ցուցանիշով երրորդ տեղում հայտնված «Երկիր մեդիան» բոլոր թեկնածուներին հատկացրել է 24 335 վայրկյան:

ՈՉ ԱՅՆՔԱՆ ԲԱՐՁՐ Է ՄՆՈՒՄ հետազոտվող ՁԼՄ-ների բանավիճային հաղորդումներին նախագահի թեկնածուների (եւ նրանց ընտրական շտաբների ներկայացուցիչների) մասնակցության ցուցանիշը: Չնայած նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկին, 8 ալիքներում 10 օրերի ընթացքում թեկնածուները կամ՝ նրանց ներկայացուցիչները նման հաղորդումների մասնակցել են 36 անգամ (անհրաժեշտ է նշել, որ դիտարկման խումբը չի հաշվառել Հանրային ռադիոյի եթերում

թեկնածուների հարցազրույցները, քանի որ դրանք հեռարձակվել են մինչև ժամը 17.00-ն, այսինքն՝ այն ժամանակ, երբ խմբագրական լուսաբանումը չի հետազոտվել): Պատճառն այս դեպքում, հավանաբար, ոչ այնքան հեռուստառադիոալիքների՝ թեկնածուներին հրավիրել չցանկանալն է, որքան որոշ գործիչների՝ հրապարակային երկխոսության պատրաստ չլինելը: Եվ բոլորից հազվադեպ (երկուական անգամ) «հյուր ստուդիայում» ձեռագրի հաղորդումներին մասնակցել են Սերժ Սարգսյանն ու Լեւոն Տեր-Պետրոսյանը (ընդ որում՝ երկու դեպքում էլ իրենց ներկայացուցիչների մակարդակով), որոնք գերադասում են ընտրագանգվածի հետ հաղորդակցման մենախոսական ձևը: Իսկ տվյալ փուլում առավել բաց են եղել Տիգրան Կարապետյանը (6 հաղորդում, որից 2-ը «ԱԼՍ» հեռուստաալիքում), Վահան Դովհաննեսյանը, Վազգեն Մանուկյանը եւ Արման Մելիքյանը (5-ական): Նրանց հաջորդում են Արթուր Բաղդասարյանը եւ Արամ Դարությունյանը (4-ական), Արտաշես Գեղամյանը (3): Ինչպես եւ դիտարկման նախորդ փուլում, հեռարձակվող ՁԼՍ-ները քիչ են հետաքրքրվել հայաստանյան այն ոչ կառավարական կազմակերպությունների կարծիքով, որոնք հետեւում են ընտրական գործընթացների զանազան կողմերին: Համենայն դեպս, նրանց ներկայացուցիչները հետազոտվող բանավիճալի հաղորդումների հյուր չեն եղել: Բացառված չէ, որ դա էլ համաձայնեցված (կամ ուղղորդված) քաղաքականության տարր էր:

ԻՆՉ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է բուն նախընտրական քարոզչական նյութերին (քաղաքական գովազդին), դիտարկումը հիմք չի տալիս խոսելու հետազոտվող ալիքներում դրանց որել է կերպ խոչընդոտելու մասին: Բոլոր թեկնածուներն օգտվում են Հ1-ում իրենց հասանելիք անվճար եթերաժամանակից: Իսկ վճարովի եթերից (բոլոր հետազոտվող ալիքներում), առայժմ՝ հունվարի 30-ի դրությամբ, օգտվել են վեց թեկնածուներ (բացի Տիգրան Կարապետյանից, Արման Մելիքյանից եւ Արամ Դարությունյանից): Վազգեն Մանուկյանն ու Արտաշես Գեղամյանն իրենց գովազդը տեղադրել են միայն երկու հանրային ալիքներում: Չորս թեկնածուներ վճարել են ոչ միայն հանրային, այլեւ մասնավոր ալիքների եթերի համար: Քարոզչական նյութերի ծավալով առաջատարը Վահան Դովհաննեսյանն է (16 294 վրկ. վճարովի եւ անվճար եթերաժամանակ), որն օգտվել է բոլոր 7 հեռուստաալիքներից, սակայն անտեսել է Հանրային ռադիոն: Նրան հետեւում են Լեւոն Տեր-Պետրոսյանը (10 256 վրկ.), որը ներկա է եղել հետազոտվող բոլոր 8 ալիքների գովազդային եթերում եւ Արթուր Բաղդասարյանը (8 632 վրկ.), որը միայն «Շանթի» գովազդային եթերից չի օգտվել: Այս ցուցանիշով Սերժ Սարգսյանը միայն չորրորդ տեղում է (8 155 վրկ.), նա իր գովազդն առայժմ չի տեղադրել «Կենտրոն» եւ «Երկիր մեդիա» հեռուստաալիքներում:

Հետազոտվող ՁԼՍ-ներից թեկնածուների համար առավել գրավիչ էր Հ1-ի վճարովի եթերը, նրան հետեւում են «Արմենիան», «Շանթը», «ԱԼՍ»-ն, «Երկիր մեդիան», Հ2-ը, «Կենտրոնը»: Ամենաքիչ գրավիչը Հանրային ռադիոյի եթերն էր:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

21-30 հունվարի 2008 թ.

8 հեռարձակվող ՁԼՄ-ներում նախագահի թեկնածուների հիշատակումների քանակը եւ բնույթը (դրական, բացասական, չեզոք),
 նրանց հատկացված եթերաժամանակը, քաղաքական գույնագիրը.
 Հ1, «ԱԼՄ», «Արմենիա», Հ2, «Երկիր մեդիա», «Կենտրոն», «Շանթ», Հայաստանի հանրային ռադիո

	Նախագահի թեկնածուներ	Խմբագրական լուսաբանում							Նախագահի թեկնածուին հատկացված քաղաքական գույնագիրը	
		Թեկնածուի հիշատակումների քանակը (միավոր)	Հիշատակումների բնույթը			Թեկնածուին հատկացված ընդհանուր եթերաժամանակը (վրկ.)	Թեկնածուի պաշտոնական եւ մասնագիտական գործունեության լուսաբանումը (վրկ.)	Մասնագիտական եւ (կամ) պաշտոնական պարտականության հետ չկապված գործունեության լուսաբանումը (վրկ.)	Վճարովի (վրկ.)	Անվճար (վրկ.)
			+	-	0					
1.	Սերժ Սարգսյան	425	93	6	326	29441.8	4803	24638.8	5295	2860
2.	Վահան Հովհաննեսյան	269	16	1	252	26993.2	43	26950.2	15334	960
3.	Տիգրան Կարապետյան	163	11	1	151	24605.6	34	24571.6	0	959
4.	Արթուր Բաղդասարյան	256	12	1	243	22044.8	0	22044.8	5992	2640
5.	Վազգեն Մանուկյան	218	2	0	216	21181.6	0	21181.6	199	2661
6.	Լեւոն Տեր-Պետրոսյան	277	0	72	205	20454.7	0	20454.7	7436	2820
7.	Արտաշես Գեղամյան	214	7	3	204	18354.1	0	18354.1	1939	2880
8.	Արման Մելիքյան	133	0	0	133	13351.2	0	13351.2	0	934
9.	Արամ Հարությունյան	153	0	0	153	12719.7	0	12719.7	0	1935
	ԸՆԴՀԱՆՈՒՄ	2108	141	84	1883	189146.7	4880	184266.7	36195	18649

21-30 հունվարի 2008 թ.

Հետազոտված հեռուստառադիոընկերությունների բանավիճային հաղորդումներին մասնակցելու համար հրավիրված նախագահի թեկնածուները/նրանց ներկայացուցիչները

Նախագահի թեկնածուներ	Հայաստանի հանրային հեռուստառնկերության Առաջին ալիք (Հ1)	ԱԼՍ	Արմենիա	Հայկական երկրորդ հեռուստաալիք (Հ2)	Երկիր Մեդիա	Կենտրոն	Շանթ	Հայաստանի հանրային ռադիո	Ընդամենը
Տիգրան Կարապետյան	1	2	1	0	1	1	0	0	6
Վահան Հովհաննեսյան	0	0	2	0	1	1	1	0	5
Վազգեն Մանուկյան	0	0	1	1	1	1	1	0	5
Արման Մելիքյան	1	0	0	1	1	0	2	0	5
Արթուր Բաղդասարյան	0	0	1	0	2	1	0	0	4
Արամ Հարությունյան	1	0	1	1	0	0	1	0	4
Արտաշես Գեղամյան	0	0	1	0	1	1	0	0	3
Սերժ Սարգսյան	0	0	1	0	1	0	0	0	2
Լեւոն Տեր-Պետրոսյան	0	0	0	1	0	1	0	0	2
Ընդամենը	3	2	8	4	8	6	5	0	36

**ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՋՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ՁԼՄ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ
ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(31 ՀՈՒՆՎԱՐԻ - 9 ՓԵՏՐՎԱՐԻ, 2008)**

ՆԱԽՈՐԴ ՏԱՍՆՕՐՅԱԿԻ (21-30 ՀՈՒՆՎԱՐԻ, 2008) ՀԱՄԵՄԱՏ, հետազոտության այս ժամանակաշրջանում (հունվարի 31-փետրվարի 9, 2008) մի փոքր ավելացել է ընտրարշավի խմբագրական լուսաբանման ծավալը: Սակայն դա տեղի է ունեցել ի հաշիվ ՀՀ նախագահի այն թեկնածուների, որոնք առանձնանում են իբրև ՁԼՄ-ների ուշադրությունն առավել գրավող: Նրանք են՝ ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ՀՀ վարչապետ, Հայաստանի հանրապետական կուսակցությունից նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանը, «Օրինաց երկիր» կուսակցությունից (ՕԵԿ) թեկնածու Արթուր Բաղդասարյանը, ժողովրդական կուսակցությունից թեկնածու Տիգրան Կարապետյանը, Հայ յեղափոխական դաշնակցությունից (ՀՅԴ) թեկնածու Վահան Հովհաննեսյանը, «Ազգային միաբանություն» կուսակցությունից թեկնածու Արտաշես Գեղամյանը եւ Ազգային ժողովրդավարական միությունից (ԱԺՄ) թեկնածու Վազգեն Մանուկյանը: Ինքնառաջադրված Արման Մելիքյանը եւ «Ազգային համաձայնություն» կուսակցությունից թեկնածու Արամ Հարությունյանը որոշակիորեն հետ են մնում առաջատար յոթնյակից: Ծիշտ է՝ Տիգրան Կարապետյանը հիմնական լուսաբանումն ավանդաբար ստացել է իր սեփականությունը հանդիսացող «ԱԼՍ» հեռուստաալիքում, եւ եթե «սեփական» եթերում թեկնածուն արժանանար նույնպիսի ուշադրության, ինչպիսին միջին հաշվով հետազոտվող մյուս յոթ ալիքներում է, ապա նա կլիներ ութերորդը՝ Արման Մելիքյանի եւ Արամ Հարությունյանի միջեւ:

Մի քիչ մեծացել է նաեւ ամենաշատ եւ ամենաքիչ համախառն (բոլոր 8 հետազոտվող ՁԼՄ-ներում միասին) լուսաբանում ստացած թեկնածուների միջեւ տարբերությունը: Լեւոն Տեր-Պետրոսյան՝ 37 016 վայրկյան եւ Արամ Հարությունյան՝ 8 725 (հարաբերակցությունն ավելի քան 4 : 1 է, այն դեպքում, երբ նախորդ տասնօրյակում ամենաշատ եւ ամենաքիչ լուսաբանումներ ստացած թեկնածուների հարաբերակցությունը մոտ երկուսուկեսը մեկի էր):

ՀՀ առաջին նախագահը սույն հաշվետվության մեջ ներկայացվող տասնօրյակում ամենաշատ ուշադրությանն է արժանացել 8 հետազոտվող հեռարձակվող ալիքներում: Նրան հետեւում է Սերժ Սարգսյանը՝ 32 786 վրկ. (դրանից 9 451 վայրկյանը բաժին է ընկնում նրա՝ իբրև վարչապետի գործունեության լուսաբանմանը): Ընդսմին, եթե թեկնածուներին հատկացված ընդհանուր եթերաժամանակից հանենք նրանց պաշտոնական գործունեության լուսաբանումը, ապա Սերժ Սարգսյանը համախառն եթերաժամանակով հետ կմնա եւս 3 թեկնածուներից՝ Արթուր Բաղդասարյանից (29 963 վրկ.), Տիգրան Կարապետյանից (25 706 վրկ.) եւ Վահան Հովհաննեսյանից (25 601 վրկ.):

ՄԻԵՎՆՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿ, Լեւոն Տեր-Պետրոսյանն անվիճելի առաջատարն է մնում նշանային բնութագրիչ հիշատակումների թվով (146), ավելի ճիշտ՝ բացասական հիշատակումներով (143 բացասական՝ 3 դրականի դիմաց): Հաճախակի են նաեւ Սերժ Սարգսյանի նշանային բնութագրիչ հիշատակումները (83 դրական եւ 24 բացասական): Այս երկու թեկնածուները, ինչպես եւ դիտարկման բոլոր նախորդ փուլերում (8 հեռարձակվող ՁԼՄ-ների դիտարկումն իրականացվել է նաեւ ընտրարշավի նախաշեմին՝ 2007 թվականի հոկտեմբեր-դեկտեմբերին), հակադիր լուսաբանումներ են ստացել: Մյուս թեկնածուներից նշանային հիշատակումների դրական հաշվեկշիռ ունեն Տիգրան Կարապետյանը (8-0) եւ Վահան Հովհաննեսյանը (14-0), բացասական հաշվեկշիռ ունեն՝ Արթուր Բաղդասարյանը (11 դրական եւ 16 բացասական) եւ Վազգեն Մանուկյանը (4-8), չեզոք կամ համարյա չեզոք՝ Արտաշես Գեղամյանը (3-4), Արման Մելիքյանը (0-1) եւ Արամ Հարությունյանը (0-0): Ընդ որում՝ Տիգրան Կարապետյանի բոլոր դրական հիշատակումները դիտարկման խումբն արձանագրել է «ԱԼՍ» հեռուստաալիքում, իսկ Վահան Հովհաննեսյանի 14 դրական հիշատակումներից 11-ը՝ «Երկիր մեդիայում»: Այլ խոսքով, դրական հաշվեկշիռ ունեն միայն «իշխանության կուսակցությունից» եւ/կամ առաջատար հեռուստաընկերություններից մեկի սեփականատեր (կամ դրա աջակցությունը վայելող) թեկնածուները: Այս հանգամանքը վկայում է, որ ընտրարշավների խմբագրական լուսաբանման անհավասար պայմանների խնդիրը Հայաստանում բավականին հրատապ է մնում:

ԵՐԿՈՒ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ (Սերժ Սարգսյանի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի) լուսաբանումների պահպանվող բեւեռացվածությունը առավել արտահայտվել է «Կենտրոն» հեռուստաալիքում: Սարգսյանն այստեղ 19 անգամ հիշատակվել է դրական եւ ոչ մի անգամ չի հիշատակվել բացասական

համատեքստում, իսկ Տեր-Պետրոսյանը՝ համապատասխանաբար, 0 եւ 44: Ընդ որում, վարչապետի դրական հիշատակումներից 9-ը եւ առաջին նախագահի բացասական հիշատակումներից 30-ը բաժին են ընկնում «Ի՞նչ են գրում թերթերը» հաղորդմանը: Համարյա նույն պատկերն էր ստացվել թերթերի այս տեսության մեջ նաեւ նախորդ տասնօրյակում: Ինչպես նշվել է հայրենական լրատվական շուկայի բազմաթիվ ուսումնասիրություններում, Հայաստանի տպագիր հրատարակությունների մեծամասնությունն ունի վառ արտահայտված եւ բազմազան (հաճախ՝ արմատական) քաղաքական ուղղվածություն: Մասնավորապես, ներկա ընտրարշավում թերթերի դիրքորոշումները, առաջին հերթին՝ վարչապետի եւ առաջին նախագահի անձերի վերաբերյալ, տրամագծորեն հակադիր են: Սարգսյանի եւ Տեր-Պետրոսյանի հիշատակումների՝ վերը բերված ցուցանիշները վկայում են, որ անդրադառնալով մամուլում այս երկու քաղաքական գործիչների լուսաբանումներին, «Ի՞նչ են գրում թերթերը» հաղորդման հեղինակները բավականին միտումնավորություն են ցուցաբերում:

Հայաստանի հանրային հեռուստատեսության առաջին ալիքը (Հ1), ինչպես եւ նախորդ տասնօրյակում, օրենքով վերապահված հավասարակշռություն է ցուցաբերել միայն եթերաժամանակի բաշխման հարցում, սակայն՝ ոչ թեկնածուների լուսաբանման բնույթի (նկատի է առնվում դարձյալ Սերժ Սարգսյանին եւ Լեւոն Տեր-Պետրոսյանին): Նախընտրական քարոզչության հետազոտված 20 օրերին վարչապետը 32 անգամ հիշատակվել է դրական եւ 3 անգամ բացասական համատեքստում: Առաջին նախագահն ունի 27 բացասական եւ ոչ մի դրական հիշատակում: Հակադիր լուսաբանումը որոշակիորեն պակաս կտրուկ է Հայաստանի հանրային ռադիոյում. այստեղ Սարգսյանի նշանային հիշատակումների հաշվեկշիռը 20 օրերին 14 - 0 է, իսկ Տեր-Պետրոսյանինը՝ 0-16: 2007 թվականի հոկտեմբեր-դեկտեմբերին Հանրային ռադիոն, ընդհակառակը, աչքի էր ընկնում ավելի անհավասարակշռությամբ: Հանրային ռադիոյում այս երկու թեկնածուների լուսաբանումների նկատմամբ վերաբերմունքը ընդգծվում է նաեւ նրանով, որ նախընտրական քարոզչության նույն 20 օրերի ընթացքում մնացած թեկնածուները հիշատակվել են բացառապես չեզոք համատեքստում: Հ1-ում մյուս յոթ թեկնածուները նույնպես հազվադեպ են արժանացել նշանային հիշատակումների. 10 օրվա ընթացքում (2008 թ հունվարի 31-ից, փետրվարի 9) նրանց ընդհանուր հիշատակումների միայն 3%-ն է եղել բնութագրիչ: Տեր-Պետրոսյանի դեպքում այդ ցուցանիշը հավասար է 28%-ի, Սարգսյանի դեպքում՝ 18,8%-ի: Բերված թվերը վկայում են, որ Հանրային հեռուստառադիոընկերության լրագրողները տիրապետում են անկողմնակալ լուսաբանման հմտություններին, սակայն միշտ չեն դրանք կիրառում:

Ինչպես եւ դիտարկման նախորդ փուլերում, Սերժ Սարգսյանի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի լուսաբանումների նշված միտումը, որ հավանաբար դարձել է ներկա ընտրարշավի գլխավոր առանձնահատկությունը, այս տասնօրյակում նույնպես դրսևորվեց բոլոր հետազոտված հեռարձակվող լրատվամիջոցներում, բացի «Երկիր մեդիայից»: Այս հեռուստաալիքում եւ վարչապետը, եւ առաջին նախագահը 10 օրերին ունեն նշանային հիշատակումների բացասական հաշվեկշիռ:

Նախընտրական քարոզչության ընթացքում արձանագրվել է հետազոտված յոթ հեռուստաալիքների ինֆորմացիոն քաղաքականության եւս մեկ նմանություն. նրանք բոլորը Սերժ Սարգսյանի նախընտրական միջոցառումների մասին ռեպորտաժները հեռարձակում են դրանց անցկացման հաջորդ օրը, այն դեպքում, երբ մյուս թեկնածուների հանրահավաքները, որպես կանոն, լուսաբանվում են նույն օրը: Այս դեպքում էլ «Երկիր մեդիայում» ընտրարշավի լուսաբանումն ընդհանուր կանոնից որոշ չափով շեղվում է. այստեղ Սերժ Սարգսյանի միջոցառումներն անկանոն են հայտնվում եթերում, թեպետ նույնպես հեռարձակվում են հաջորդ օրը: Այսպիսով, դիտարկման խումբը ստիպված է դարձյալ կրկնել առաջատար հեռարձակվող ՁԼՄ-ների մեծամասնության կողմից ՀՀ-ում ընտրարշավի լուսաբանման համաձայնեցված (կամ ուղղորդված) քաղաքականության մասին իր ենթադրությունը:

Հայաստանի հանրային ռադիոն (35 178 վրկ.) եւ «Կենտրոնը» (30 981 վրկ.), ինչպես եւ նախորդ տասնօրյակում, ամենից շատն են ուշադրություն դարձրել նախընտրական թեմատիկային: Նրանց հետեւում են «ԱԼՄ»-ն (30 276 վրկ.), «Երկիր մեդիան» (26 802 վրկ.) եւ Հայկական երկրորդ հեռուստաալիքը (Հ2, 26 581 վրկ.): Մյուսներից քիչ են ընտրությունների թեմային անդրադարձել «Շանթը» (21 310 վրկ.) եւ «Արմենիան» (20 113 վրկ.):

ԻՆՉՊԵՍ ԵՎ ՆԱԽՈՐԴ ՏԱՍԸ ՕՐԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ, բարձր չէր հետազոտվող ՁԼՄ-ների բանավիճային հաղորդումներին նախագահի թեկնածուների (եւ նրանց ընտրական շտաբների ներկայացուցիչների) մասնակցության ցուցանիշը: Չնայած նախընտրական քարոզչության բուռն ժամանակաշրջանին, 8

ալիքներում 10 օրերի ընթացքում թեկնածուները կամ նրանց ներկայացուցիչները միայն 28 անգամ են մասնակցել նման հաղորդումների. դա ավելի քիչ է, քան 2008 թվականի հունվարի 21-30-ին էր (36 անգամ): Այստեղ պետք է նշել, որ դիտարկման խումբը չի հաշվառել Հանրային ռադիոյով թեկնածուների հարցազրույցները, քանի որ դրանք հեռարձակվել են մինչև 17.00-ն, այսինքն՝ այն ժամերին, երբ խմբագրական լուսաբանումը չի հետազոտվել: Ինչպես հետևում է ՁԼՄ-ների ներկայացուցիչների հետ այս խնդրի քննարկումից, պատճառը, հավանաբար, ոչ այնքան հեռուստառադիոընկերությունների կողմից թեկնածուներին հրավիրել չցանկանալն է, որքան որոշ քաղաքական գործիչների՝ հրապարակային երկխոսության պատրաստ չլինելը:

Ամենից քիչ «հյուր ստուդիայում» ձեւաչափի հաղորդումներին մասնակցել են Սերժ Սարգսյանը (նախընտրական քարոզչության 20 օրերի ընթացքում 2 անգամ) եւ Լեւոն Տեր-Պետրոսյանը (3 անգամ). ավելի ճիշտ՝ բոլոր դեպքերում մասնակցել են ոչ թե իրենք, այլ նրանց ներկայացուցիչները: Իսկ առավել մատչելիություն այդ նույն ժամանակաշրջանում ցուցաբերել են Տիգրան Կարապետյանը (11 հաղորդում, թեպետ դրանցից 5-ը «ԱԼՄ»-ում), Վահան Յովհաննեսյանը եւ Վազգեն Մանուկյանը (9-ական), Արման Մելիքյանը, Արթուր Բաղդասարյանը եւ Արտաշես Գեղամյանը (8-ական), Արամ Հարությունյանը (6): Ինչպես եւ դիտարկման նախորդ փուլերում, հեռարձակվող ՁԼՄ-ները քիչ են հետաքրքրվել այն հասարակական կազմակերպությունների կարծիքներով, որոնք դիտարկում են ընտրական գործընթացների զանազան կողմերը:

ԻՆՉ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է բուն նախընտրական քարոզչական նյութերին (քաղաքական գովազդին), դիտարկումը հիմք չի տալիս խոսելու հետազոտվող ալիքներում դրանց որեւէ կերպ խոչընդոտելու մասին: Բոլոր թեկնածուներն օգտվում են Հ1-ում իրենց հատկացված անվճար եթերաժամանակից: Հետազոտված 20 օրերի արդյունքներով քարոզչական նյութերի համախառն ծավալով (բոլոր 8 ալիքներում) առաջատարը մնում է Վահան Յովհաննեսյանը (30 052 վրկ. վճարովի եւ անվճար եթերաժամանակ), նրան հետևում են Արթուր Բաղդասարյանը (18 129 վրկ.) եւ Լեւոն Տեր-Պետրոսյանը (18 075 վրկ.): Այս ցուցանիշով Սերժ Սարգսյանը միայն չորրորդն է (16 011 վրկ.): Թվարկված թեկնածուներից երեքը (բացառությամբ Արթուր Բաղդասարյանի) հունվարի 31-ից փետրվարի 9-ի ժամանակաշրջանում, նախորդ տասնօրյակի համեմատ (21-30 հունվարի) քարոզչական նյութերի ծավալը կրճատել են:

Երկրորդ տասնօրյակում թեկնածուների համար հետազոտվող ՁԼՄ-ներից ամենագրավիչը Հ1-ի վճարովի եթերն է եղել: Նրան հետևում են «Արմենիան», «ԱԼՄ»-ն, «Շանթը», Հ2-ը, «Երկիր մեդիան», «Կենտրոնը»: Ամենաքիչ գրավիչը Հանրային ռադիոյի եթերն է:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

31 հունվարի - 9 փետրվարի 2008 թ.

8 հեռարձակվող ՁԼՄ-ներում նախագահի թեկնածուների հիշատակումների քանակը եւ բնույթը (դրական, բացասական, չեզոք),
 նրանց հատկացված եթերաժամանակը, քաղաքական գովազդը.
 Հ1, «ԱԼՄ», «Արմենիա», Հ2, «Երկիր մեդիա», «Կենտրոն», «Շանթ», Հայաստանի հանրային ռադիո

	Նախագահի թեկնածուներ	Խմբագրական լուսաբանում						Նախագահի թեկնածուին հատկացված քաղաքական գովազդը		
		Թեկնածուի հիշատակումների քանակը (միավոր)	Հիշատակումների բնույթը			Թեկնածուին հատկացված ընդհանուր եթերաժամանակը (վրկ.)	Թեկնածուի պաշտոնական եւ մասնագիտական գործունեության լուսաբանումը (վրկ.)	Մասնագիտական եւ (կամ) պաշտոնական պարտականության հետ չկապված գործունեության լուսաբանումը (վրկ.)	Վճարովի (վրկ.)	Անվճար (վրկ.)
			+	-	0					
1.	Լեւոն Տեր-Պետրոսյան	461	3	143	315	37016	0	37016	4291	3528
2.	Սերժ Սարգսյան	512	83	24	405	32786.2	9450.5	23335.7	4269	3587
3.	Արթուր Բաղդասարյան	371	11	16	344	29963.2	0	29963.2	5902	3595
4.	Տիգրան Կարապետյան	156	8	0	148	25722.2	16	25706.2	4003	1200
5.	Վահան Հովհաննեսյան	276	14	0	262	25600.9	0	25600.9	10785	2973
6.	Արտաշես Գեղամյան	245	3	4	238	22393.7	0	22393.7	2418	3600
7.	Վազգեն Մանուկյան	228	4	8	216	19857	0	19857	0	3322
8.	Արման Մելիքյան	173	0	1	172	13619.6	0	13619.6	0	1090
9.	Արամ Հարությունյան	152	0	0	152	8725.4	0	8725.4	27	2905
	Ընդամենը	2574	126	196	2252	215684.2	9466.5	206217.7	31695	25800

31 հունվարի - 9 փետրվարի 2008 թ.

Հետազոտված հեռուստառադիոընկերությունների բանավիճային հաղորդումներին մասնակցելու համար հրավիրված նախագահի թեկնածուները/նրանց ներկայացուցիչները

Նախագահի թեկնածուներ	Հայաստանի հանրային հեռուստառընկերության Առաջին ալիք (Հ1)	ԱԼՄ	Արմենիա	Հայկական երկրորդ հեռուստաալիք (Հ2)	Երկիր Մեդիա	Կենտրոն	Շանթ	Հայաստանի հանրային ռադիո	Ընդամենը
Արտաշես Գեղամյան	0	0	1	0	1	1	2	0	5
Տիգրան Կարապետյան	0	3	1	1	0	0	0	0	5
Արթուր Բաղդասարյան	1	0	0	0	1	1	1	0	4
Վահան Հովհաննեսյան	0	0	0	1	3	0	0	0	4
Վազգեն Մանուկյան	1	0	1	0	0	2	0	0	4
Արման Մելիքյան	0	0	2	0	0	1	0	0	3
Արամ Հարությունյան	0	0	0	0	1	0	1	0	2
Լեւոն Տեր-Պետրոսյան	0	0	0	0	0	0	1	0	1
Սերժ Սարգսյան	0	0	0	0	0	0	0	0	0
Ընդամենը	2	3	5	2	6	5	5	0	28

**ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ
ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ 2008**

21 հունվարի - 17 փետրվարի 2008 թ.

8 հեռարձակվող ՁԼՄ-ներում նախագահի թեկնածուների հիշատակումների քանակը եւ բնույթը (դրական, բացասական, չեզոք),
 նրանց հատկացված եթերաժամանակը, քաղաքական գովազդը.
 Հ1, «ԱԼՄ», «Արմենիա», Հ2, «Երկիր մեդիա», «Կենտրոն», «Շանթ», Հայաստանի հանրային ռադիո

	Նախագահի թեկնածուներ	Խմբագրական լուսաբանում							Նախագահի թեկնածուին հատկացված քաղաքական գովազդը	
		Թեկնածուի հիշատակումների քանակը (միավոր)	Հիշատակումների բնույթը			Թեկնածուին հատկացված ընդհանուր եթերաժամանակը (վրկ.)	Թեկնածուի պաշտոնական եւ մասնագիտական գործունեության լուսաբանումը (վրկ.)	Մասնագիտական եւ (կամ) պաշտոնական պարտականության հետ չկապված գործունեության լուսաբանումը (վրկ.)	Վճարովի (վրկ.)	Անվճար (վրկ.)
			+	-	0					
1.	Սերժ Սարգսյան	1384	264	60	1060	102074.4	17045	85029.4	18346	10754
2.	Լեւոն Տեր-Պետրոսյան	1232	22	406	804	97687.6	0	97687.6	19856	10503
3.	Վահան Հովհաննեսյան	767	52	2	713	87567.5	43	87524.5	31260	7710
4.	Արթուր Բաղդասարյան	902	33	31	838	74209	0	74209	18920	10417
5.	Տիգրան Կարապետյան	453	28	1	424	70424.5	50	70374.5	8900	3599
6.	Արտաշես Գեղամյան	648	11	15	622	56978.6	0	56978.6	11060	10800
7.	Վազգեն Մանուկյան	654	11	15	628	54874.8	0	54874.8	1104	9490
8.	Արման Մելիքյան	433	0	2	431	34255.3	0	34255.3	0	3114
9.	Արամ Հարությունյան	437	0	0	437	29482.1	0	29482.1	118	7679
	Ընդամենը	6910	421	532	5957	607553.8	17138	590415.8	109564	74066

21 հունվարի - 17 փետրվարի 2008 թ.

Չ1-ում նախագահի թեկնածուների հիշատակումների քանակը եւ բնույթը (դրական, բացասական, չեզոք),
նրանց հատկացված եթերաժամանակը, քաղաքական գովազդը

	Նախագահի թեկնածուներ	Խմբագրական լուսաբանում							Նախագահի թեկնածուին հատկացված քաղաքական գովազդը	
		Թեկնածուի հիշատակումների քանակը (միավոր)	Հիշատակումների բնույթը			Թեկնածուին հատկացված ընդհանուր եթերաժամանակը (վրկ.)	Թեկնածուի պաշտոնական եւ մասնագիտական գործունեության լուսաբանումը (վրկ.)	Մասնագիտական եւ (կամ) պաշտոնական պարտականության հետ չկապված գործունեության լուսաբանումը (վրկ.)	Վճարովի (վրկ.)	Անվճար (վրկ.)
			+	-	0					
1.	Սերժ Սարգսյան	206	49	3	154	12908.4	1918	10990.4	5681	3600
2.	Լեւոն Տեր-Պետրոսյան	153	0	63	90	11134.8	0	11134.8	6293	3600
3.	Արթուր Բաղդասարյան	111	4	5	102	9654.7	0	9654.7	7014	3600
4.	Արտաշես Գեղամյան	96	6	5	85	8112.2	0	8112.2	7183	3600
5.	Վահան Հովհաննեսյան	84	11	0	73	7484	0	7484	6910	3600
6.	Վազգեն Մանուկյան	79	4	2	73	7250.1	0	7250.1	1059	3475
7.	Արամ Հարությունյան	72	0	0	72	4930.9	0	4930.9	118	3519
8.	Արման Մելիքյան	65	0	0	65	4821.1	0	4821.1	0	3114
9.	Տիգրան Կարապետյան	58	3	0	55	3992.3	0	3992.3	4071	3599
	Ընդամենը	924	77	78	769	70288.5	1918	68370.5	38329	31707

21 հունվարի - 17 փետրվարի 2008 թ.

«ԱԼՄ» հեռուստաալիքում նախագահի թեկնածուների հիշատակումների քանակը եւ բնույթը (դրական, բացասական, չեզոք), նրանց հատկացված եթերաժամանակը, քաղաքական գովազդը

	Նախագահի թեկնածուներ	Խմբագրական լուսաբանում						Նախագահի թեկնածուին հատկացված քաղաքական գովազդը		
		Թեկնածուի հիշատակումների քանակը (միավոր)	Հիշատակումների բնույթը			Թեկնածուին հատկացված ընդհանուր եթերաժամանակը (վրկ.)	Թեկնածուի պաշտոնական եւ մասնագիտական գործունեության լուսաբանումը (վրկ.)	Մասնագիտական եւ (կամ) պաշտոնական պարտականության հետ չկապված գործունեության լուսաբանումը (վրկ.)	Վճարովի (վրկ.)	Անվճար (վրկ.)
			+	-	0					
1.	Տիգրան Կարապետյան	51	22	0	29	42268.1	50	42218.1	3240	0
2.	Սերժ Սարգսյան	133	25	12	96	11579.1	2108	9471.1	1559	0
3.	Վահան Զովհաննեսյան	55	5	1	49	10353.6	0	10353.6	2983	0
4.	Արթուր Բաղդասարյան	71	13	10	48	9504.1	0	9504.1	3320	0
5.	Լեւոն Տեր-Պետրոսյան	80	3	29	48	8739.1	0	8739.1	672	0
6.	Արման Մելիքյան	26	0	2	24	1023.6	0	1023.6	0	0
7.	Արտաշես Գեղամյան	26	0	3	23	592.6	0	592.6	0	0
8.	Վազգեն Մանուկյան	24	2	3	19	587.6	0	587.6	0	0
9.	Արամ Զարուբյունյան	18	0	0	18	240.6	0	240.6	0	0
	ԸՆԴՀԱՆՈՒՐ	484	70	60	354	84888.4	2158	82730.4	11774	0

21 հունվարի - 17 փետրվարի 2008 թ.

«Արմենիա» հեռուստաալիքում նախագահի թեկնածուների հիշատակումների քանակը եւ բնույթը (դրական, բացասական, չեզոք), նրանց հատկացված եթերաժամանակը, քաղաքական գովազդը

	Նախագահի թեկնածուներ	Խմբագրական լուսաբանում						Նախագահի թեկնածուին հատկացված քաղաքական գովազդը		
		Թեկնածուի հիշատակումների քանակը (միավոր)	Հիշատակումների բնույթը			Թեկնածուին հատկացված ընդհանուր եթերաժամանակը (վրկ.)	Թեկնածուի պաշտոնական եւ մասնագիտական գործունեության լուսաբանումը (վրկ.)	Մասնագիտական եւ (կամ) պաշտոնական պարտականության հետ չկապված գործունեության լուսաբանումը (վրկ.)	Վճարովի (վրկ.)	Անվճար (վրկ.)
			+	-	0					
1.	Սերժ Սարգսյան	92	25	3	64	10080	2219	7861	3350	0
2.	Վահան Զովհաննեսյան	37	0	0	37	7576	0	7576	4400	0
3.	Արտաշես Գեղամյան	39	0	0	39	6032	0	6032	275	0
4.	Արամ Զարուբյունյան	30	0	0	30	5372	0	5372	0	0
5.	Վազգեն Մանուկյան	33	3	0	30	5314	0	5314	0	0
6.	Արման Մելիքյան	28	0	0	28	5280	0	5280	0	0
7.	Տիգրան Կարապետյան	28	0	1	27	5081	0	5081	0	0
8.	Արթուր Բաղդասարյան	40	2	0	38	4433	0	4433	3258	0
9.	Լեւոն Տեր-Պետրոսյան	61	2	20	39	4240	0	4240	3495	0
	Ընդամենը	388	32	24	332	53408	2219	51189	14778	0

21 հունվարի - 17 փետրվարի 2008 թ.

Չ2 հեռուստաալիքում նախագահի թեկնածուների հիշատակումների քանակը եւ բնույթը (դրական, բացասական, չեզոք), նրանց հատկացված եթերաժամանակը, քաղաքական գովազդը

	Նախագահի թեկնածուներ	Խմբագրական լուսաբանում						Նախագահի թեկնածուին հատկացված քաղաքական գովազդը		
		Թեկնածուի հիշատակումների քանակը (միավոր)	Հիշատակումների բնույթը			Թեկնածուին հատկացված ընդհանուր եթերաժամանակը (վրկ.)	Թեկնածուի պաշտոնական եւ մասնագիտական գործունեության լուսաբանումը (վրկ.)	Մասնագիտական եւ (կամ) պաշտոնական պարտականության հետ չկապված գործունեության լուսաբանումը (վրկ.)	Վճարովի (վրկ.)	Անվճար (վրկ.)
			+	-	0					
1.	Սերժ Սարգսյան	257	58	11	188	14864.1	3404	11460.1	4039	0
2.	Լեւոն Տեր-Պետրոսյան	196	3	66	127	14211.6	0	14211.6	700	0
3.	Վազգեն Մանուկյան	110	0	5	105	6944.1	0	6944.1	0	0
4.	Արտաշես Գեղամյան	132	0	2	130	6870.9	0	6870.9	0	0
5.	Արթուր Բաղդասարյան	145	3	6	136	6673.4	0	6673.4	356	0
6.	Վահան Հովհաննեսյան	101	0	0	101	5925.9	0	5925.9	3804	0
7.	Տիգրան Կարապետյան	114	3	0	111	5865.9	0	5865.9	1589	0
8.	Արման Մելիքյան	94	0	0	94	4283.4	0	4283.4	0	0
9.	Արամ Հարությունյան	91	0	0	91	3697.9	0	3697.9	0	0
	Ընդամենը	1240	67	90	1083	69337.2	3404	65933.2	10488	0

21 հունվարի - 17 փետրվարի 2008 թ.

«Երկիր մեդիա» հեռուստաալիքում նախագահի թեկնածուների հիշատակումների քանակը եւ բնույթը (դրական, բացասական, չեզոք),
նրանց հատկացված եթերաժամանակը, քաղաքական գովազդը

	Նախագահի թեկնածուներ	Խմբագրական լուսաբանում						Նախագահի թեկնածուին հատկացված քաղաքական գովազդը		
		Թեկնածուի հիշատակումների քանակը (միավոր)	Հիշատակումների բնույթը			Թեկնածուին հատկացված ընդհանուր եթերաժամանակը (վրկ.)	Թեկնածուի պաշտոնական եւ մասնագիտական գործունեության լուսաբանումը (վրկ.)	Մասնագիտական եւ (կամ) պաշտոնական պարտականության հետ չկապված գործունեության լուսաբանումը (վրկ.)	Վճարովի (վրկ.)	Անվճար (վրկ.)
			+	-	0					
1.	Վահան Զովհաննեսյան	217	34	0	183	29095.5	43	29052.5	4294	0
2.	Արթուր Բաղդասարյան	184	3	2	179	12020.5	0	12020.5	3118	0
3.	Լեւոն Տեր-Պետրոսյան	181	7	57	117	8789.5	0	8789.5	1217	0
4.	Սերժ Սարգսյան	165	4	23	138	8072.5	994.5	7078	0	0
5.	Վազգեն Մանուկյան	144	2	2	140	7304	0	7304	0	0
6.	Արտաշես Գեղամյան	89	0	3	86	5563	0	5563	0	0
7.	Արամ Զարուբյունյան	106	0	0	106	5427	0	5427	0	0
8.	Արման Մելիքյան	93	0	0	93	4604	0	4604	0	0
9.	Տիգրան Կարապետյան	92	0	0	92	4091.1	0	4091.1	0	0
	Ընդամենը	1271	50	87	1134	84967.1	1037.5	83929.6	8629	0

21 հունվարի - 17 փետրվարի 2008 թ.

«Կենտրոն» հեռուստաալիքում նախագահի թեկնածուների հիշատակումների քանակը եւ բնույթը (դրական, բացասական, չեզոք),
նրանց հատկացված եթերաժամանակը, քաղաքական գովազդը

	Նախագահի թեկնածուներ	Խմբագրական լուսաբանում						Նախագահի թեկնածուին հատկացված քաղաքական գովազդը		
		Թեկնածուի հիշատակումների քանակը (միավոր)	Հիշատակումների բնույթը			Թեկնածուին հատկացված ընդհանուր եթերաժամանակը (վրկ.)	Թեկնածուի պաշտոնական եւ մասնագիտական գործունեության լուսաբանումը (վրկ.)	Մասնագիտական եւ (կամ) պաշտոնական պարտականության հետ չկապված գործունեության լուսաբանումը (վրկ.)	Վճարովի (վրկ.)	Անվճար (վրկ.)
			+	-	0					
1.	Լեւոն Տեր-Պետրոսյան	265	3	105	157	22085.7	0	22085.7	619	0
2.	Սերժ Սարգսյան	227	65	3	159	17438.3	2642.5	14795.8	0	0
3.	Արթուր Բաղդասարյան	139	1	5	133	10266.3	0	10266.3	1213	0
4.	Արտաշես Գեղամյան	102	3	1	98	8839.7	0	8839.7	0	0
5.	Վազգեն Մանուկյան	110	0	2	108	8452.7	0	8452.7	0	0
6.	Վահան Հովհաննեսյան	103	0	1	102	7887.3	0	7887.3	4403	0
7.	Արման Մելիքյան	60	0	0	60	4895.7	0	4895.7	0	0
8.	Տիգրան Կարապետյան	56	0	0	56	4035.7	0	4035.7	0	0
9.	Արամ Հարությունյան	51	0	0	51	1955.7	0	1955.7	0	0
	Ընդամենը	1113	72	117	924	85857.1	2642.5	83214.6	6235	0

21 հունվարի - 17 փետրվարի 2008 թ.

«Շանթ» հեռուստաալիքում նախագահի թեկնածուների հիշատակումների քանակը եւ բնույթը (դրական, բացասական, չեզոք), նրանց հատկացված եթերաժամանակը, քաղաքական գովազդը

	Նախագահի թեկնածուներ	Խմբագրական լուսաբանում						Նախագահի թեկնածուին հատկացված քաղաքական գովազդը		
		Թեկնածուի հիշատակումների քանակը (միավոր)	Հիշատակումների բնույթը			Թեկնածուին հատկացված ընդհանուր եթերաժամանակը (վրկ.)	Թեկնածուի պաշտոնական եւ մասնագիտական գործունեության լուսաբանումը (վրկ.)	Մասնագիտական եւ (կամ) պաշտոնական պարտականության հետ չկապված գործունեության լուսաբանումը (վրկ.)	Վճարովի (վրկ.)	Անվճար (վրկ.)
			+	-	0					
1.	Լեւոն Տեր-Պետրոսյան	105	2	24	79	10364.3	0	10364.3	3384	0
2.	Սերժ Սարգսյան	135	14	1	120	10017.9	1757	8260.9	3717	0
3.	Արտաշես Գեղամյան	81	2	1	78	9223.6	0	9223.6	0	0
4.	Վազգեն Մանուկյան	63	0	1	62	7486.2	0	7486.2	0	0
5.	Արթուր Բաղդասարյան	84	7	2	75	7107.4	0	7107.4	641	0
6.	Վահան Հովհաննեսյան	65	2	0	63	6821.6	0	6821.6	4466	0
7.	Արամ Հարությունյան	23	0	0	23	3779.3	0	3779.3	0	0
8.	Արման Մելիքյան	16	0	0	16	3201.8	0	3201.8	0	0
9.	Տիգրան Կարապետյան	5	0	0	5	33.3	0	33.3	0	0
	Ընդամենը	577	27	29	521	58035.4	1757	56278.4	12208	0

21 հունվարի - 17 փետրվարի 2008 թ.

Հայաստանի հանրային ռադիոյուն նախագահի թեկնածուների հիշատակումների քանակը եւ բնույթը (դրական, բացասական, չեզոք),
նրանց հատկացված եթերաժամանակը, քաղաքական գովազդը

	Նախագահի թեկնածուներ	Խմբագրական լուսաբանում						Նախագահի թեկնածուին հատկացված քաղաքական գովազդը		
		Թեկնածուի հիշատակումների քանակը (միավոր)	Հիշատակումների բնույթը			Թեկնածուին հատկացված ընդհանուր եթերաժամանակը (վրկ.)	Թեկնածուի պաշտոնական եւ մասնագիտական գործունեության լուսաբանումը (վրկ.)	Մասնագիտական եւ (կամ) պաշտոնական պարտականության հետ չկապված գործունեության լուսաբանումը (վրկ.)	Վճարովի (վրկ.)	Անվճար (վրկ.)
			+	-	0					
1.	Լեւոն Տեր-Պետրոսյան	191	2	42	147	18122.6	0	18122.6	3476	6903
2.	Սերժ Սարգսյան	169	24	4	141	17114.1	2002	15112.1	0	7154
3.	Արթուր Բաղդասարյան	128	0	1	127	14549.6	0	14549.6	0	6817
4.	Վահան Հովհաննեսյան	105	0	0	105	12423.6	0	12423.6	0	4110
5.	Արտաշես Գեղամյան	83	0	0	83	11744.6	0	11744.6	3602	7200
6.	Վազգեն Մանուկյան	91	0	0	91	11536.1	0	11536.1	45	6015
7.	Արման Մելիքյան	51	0	0	51	6145.7	0	6145.7	0	0
8.	Տիգրան Կարապետյան	49	0	0	49	5057.1	0	5057.1	0	0
9.	Արամ Հարությունյան	46	0	0	46	4078.7	0	4078.7	0	4160
	Ընդամենը	913	26	47	840	100772.1	2002	98770.1	7123	42359

21 հունվարի - 17 փետրվարի 2008 թ.

Հետազոտված հեռուստառադիոընկերությունների բանավիճային հաղորդումներին մասնակցելու համար հրավիրված նախագահի թեկնածուները/նրանց ներկայացուցիչները

Նախագահի թեկնածուներ	Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք (Հ1)	ԱԼՍ	Արմենիա	Հայկական երկրորդ հեռուստաալիք (Հ2)	Երկիր Մեդիա	Կենտրոն	Շանթ	Հայաստանի հանրային ռադիո	Ընդամենը
Տիգրան Կարապետյան	1	8	2	1	4	1	0	0	17
Վահան Հովհաննեսյան	1	1	3	1	8	2	1	0	17
Վազգեն Մանուկյան	1	0	2	1	4	3	2	0	13
Արթուր Բաղդասարյան	1	1	1	0	6	2	1	0	12
Արտաշես Գեղամյան	1	0	2	1	2	3	3	0	12
Արամ Հարությունյան	1	0	2	1	4	0	2	0	10
Արման Մելիքյան	1	0	2	1	2	2	2	0	10
Սերժ Սարգսյան	1	0	1	1	4	0	1	0	8
Լեւոն Տեր-Պետրոսյան	0	0	0	1	2	2	1	0	6
<i>Ընդամենը</i>	<i>8</i>	<i>10</i>	<i>15</i>	<i>8</i>	<i>36</i>	<i>15</i>	<i>13</i>	<i>0</i>	<i>105</i>